



Action funded by the  
EUROPEAN UNION



Republic of Armenia



**ՄԱԿ-Ի ԵՏՅ / ԱՅԿ-Ի ԵՎՐՈՊԱԿԱՆ  
ԳՐԱՍԵՆՅԱԿԻ «ՋՐԻ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ  
ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱԶԳԱՅԻՆ  
ԹԻՐԱԽՆԵՐԸ**

Օգոստոս 2019թ.



Էմմա Անախայան

Արմինե Առուշանյան

Նունե Բակունց

Տիգրան Օգանեզով

Գայանե Շահնազարյան

## Հրաժարում պատասխանատվությունից

Արևելյան գործընկերության երկրների համար (ԵՄՋՆ+ 4 ԱԼԳ) ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «Եվրամիության ջրային նախաձեռնությունն պլյուս» ծրագիրն իրականացվում է ՄԱԿ-ի ԵՏՀ-ի և ՏՀԶԿ-ի կողմից, որոնք պատասխանատու են 1-ին արդյունքի իրականացման համար, և Ավստրիայի ԵՄ անդամ պետությունների կոնսորցիումի կողմից՝ գլխավոր համակարգող Ումվելթբունդեսամտի<sup>1</sup> ղեկավարությամբ, և Ֆրանսիայի կողմից՝ Ջրային հարցերով միջազգային գրասենյակի ղեկավարությամբ, որը պատասխանատու է 2-րդ և 3-րդ արդյունքների իրականացման համար:

Սույն փաստաթուղթը՝ ««ՄԱԿ-ի ԵՏՀ / ԱՅԿ-ի ԵՎՐՈՊԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ «ՋՐԻ և ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՉԳԱՅԻՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ»», պատրաստվել է ԵՄՋՆ+ ծրագրի ՄԱԿ-ի ԵՏՀ-ի գլխավորած բաղադրիչի համատեքստում՝ Եվրամիության ֆինանսական աջակցությամբ: Այստեղ արտահայտված տեսակետները ոչ մի դեպքում չեն կարող դիտարկվել որպես Եվրամիության կամ Արևելյան գործընկերության երկրների կառավարությունների պաշտոնական կարծիք:

Սույն փաստաթուղթը և դրանում ներառված ցանկացած քարտեզ չեն վնասում որևէ տարածքի կարգավիճակին կամ ինքնիշխանությանը, միջազգային սահմանների և բաժանարար գծերի սահմանազատմանը և ցանկացած տարածքի, քաղաքի կամ տարածքի անվանմանը:

## ԼՁՈՒՄ

Սույն զեկույցի պատրաստման ավարտական փուլում գերատեսչությունների կառավարման կառուցվածքը փոխվել է Հայաստանի Հանրապետության 2019 թվականի մայիսի 8-ի «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքով: Հայաստանի Հանրապետության Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային կոմիտեն տեղափոխվել և վերանվանվել է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի: Ավելին, բնապահպանության նախարարությունը վերանվանվել է շրջակա միջավայրի նախարարության: Թեև ելակետային վերլուծության և թիրախների վերանայման ընթացքում հին կառույցները դեռ գործում էին, այս զեկույցը վերաբերում է արդեն նոր կառույցներին և անվանումներին՝ 2019 թվականի մայիս-հունիս ամիսների դրությամբ:

Հրատարակության  
սեփականատեր և խմբագիր՝ ՄԱԿ-ի ԵՏՀ  
Օգոստոս 2019թ.

1. Գերմանիայի շրջակա միջավայրի գործակալություն

Սույն զեկույցը պատրաստվել է «Արևելյան գործընկերություն» ծրագրի համար Եվրամիության ֆինանսավորմամբ Եվրամիության ջրային նախաձեռնությունն պյուս (ԵՄՁՆ+) ծրագրի աջակցությամբ իրականացվող «Յայաստանում «Ջրի և առողջության մասին» արձանագրության համատեքստում սահմանված ազգային թիրախների վերանայում և «Ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովման գործողությունների պլան»-ի իրականացում» ծրագրի շրջանակում:

Ծրագրի իրականացման գործում Յայաստանի Հանրապետությանն իր աջակցությունն է ցուցաբերել Միավորված ազգերի կազմակերպության եվրոպական տնտեսական հանձնաժողովը (ՄԱԿ-ի ԵՏՀ): Ծրագիրն իրականացվել է Յայաստանի Հանրապետության (ՀՀ) շրջակա միջավայրի նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալության, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի և ՀՀ առողջապահության նախարարության հետ համակարգմամբ և «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» (ՀԿՀԱՇՄ) հասարակական կազմակերպության (ՀԿ) կազմակերպչական աջակցությամբ: Չեկույցը պատրաստվել է ազգային աշխատանքային խմբի պատրաստած տեխնիկական փաստաթղթի հիման վրա:

## **Սույն զեկույցի պատրաստմանն օժանդակել են հետևյալ փորձագետները՝**

Էդգար Փիրումյան (ՀՀ շրջակա միջավայրի նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն),

Արմինե Առուշանյան (ՀՀ տարածքային կառավարման և Էներգետիկ ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի),

Նունե Բակունց (ՀՀ առողջապահության նախարարություն),

Էմմա Անախասյան (խմբի ղեկավար),

Տիգրան Օգանեզով (անկախ փորձագետ),

Գայանե Շահնազարյան (անկախ փորձագետ),

Ալիշեր Մամաջանով (ՄԱԿ-ի ԵՏՀ, «Ջրի և առողջության մասին» արձանագրության քարտուղարություն),

Քրիստին Քիցլեր (ՄԱԿ-ի ԵՏՀ, «Ջրի և առողջության մասին» արձանագրության քարտուղարություն):

Ծրագրային թիմը ցանկանում է շնորհակալություն հայտնել նաև Եվրոպական Միության ջրային նախաձեռնության (ԵՄՁՆ) շրջանակում իրականացվող ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման հարցերով ազգային քաղաքականության երկխոսության (ԱԶԵ) ղեկավար հանձնախմբի անդամներին և Յայաստանում իրավիճակի գնահատման աշխատանքներին մասնակցություն ունեցած բոլոր ազգային և միջազգային փորձագետներին՝ զեկույցի պատրաստման հարցում տրամադրած արժեքավոր մեկնաբանությունների և օժանդակության համար:

# Ամփոփում

Եվրոպական Միության ջրային նախաձեռնությունը (ԵՄՁՆ) մեկնարկել է 2002թ.-ին Յոհանեսբուրգում կայացած կայուն զարգացման վերաբերյալ համաշխարհային գագաթաժողովի ժամանակ՝ հիմնական նպատակ ունենալով ջրային հատվածի զարգացման հարցում ԵՄ օժանդակության համակարգումը:

Հայաստանում 2006թ.-ից սկսած Միավորված ազգերի կազմակերպության եվրոպական տնտեսական հանձնաժողովը (ՄԱԿ-ի ԵՏՀ) և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ) ԵՄՁՆ-ին աջակցություն են ցուցաբերում ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման (ՁՌՀԿ) և ջրամատակարարման և ջրահեռացման (ՁՁ) հարցերով ազգային քաղաքականության երկխոսության (ԱԶԵ) գործընթացի միջոցով: ԱԶԵ-ն բազմաշահագրգիռ կողմերի հարթակ է՝ ջրային ոլորտի քաղաքականության բարեփոխումների քննարկման և տարեկան երկու անգամ ղեկավար հանձնախմբի հանդիպումների ժամանակ առանցքային որոշումների ընդունման համար:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունն Արևելյան գործընկերության երկրների համար ԵՄՁՆ+ ծրագրի մաս է, որն անդրադառնում է ջրային պաշարների արդյունավետ կառավարման բարելավման և իրականացման ոլորտում առկա հիմնախնդիրներին: «Հայաստանում «Ջրի և առողջության մասին» արձանագրության համատեքստում սահմանված ազգային թիրախների վերանայում և «Ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովման գործողությունների պլան»-ի իրականացում» ծրագիրը ԵՄՁՆ+ ծրագրի մաս է կազմում և նպատակաուղղված է 2014թ.-ին ՄԱԿ-ի ԵՏՀ/ ԱՀԿ եվրոպական գրասենյակի «Ջրի և առողջության մասին» արձանագրության շրջանակում սահմանված ազգային նպատակային ցուցանիշների վերանայմանը և ջրային օրենսդրության գնահատմանը՝ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության համատեքստում:

Ծրագիրն իրականացվել է Հայաստանի շրջակա միջավայրի (նախկինում բնապահպանության), առողջապահության և տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունների հետ սերտ համագործակցությամբ և «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» հասարակական կազմակերպության մասնակցությամբ:

Ծրագիրը ղեկավարվել է Հայաստանում ԵՄՁՆ ԱԶԵ-ի ղեկավար հանձնախմբի կողմից (նախագահող՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալության (ՁՌԿԳ) պետ Էդգար Փիրումյան), որի անդամները ներկայացնում էին ջրային պաշարների կառավարման, ջրամատակարարման և ջրահեռացման, ներառյալ առողջապահական խնդիրներով զբաղվող հայաստանյան առանցքային կազմակերպություններ և ՀՀ-ներ: Հայաստանում ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման և ջրամատակարարման ու ջրահեռացման ոլորտի ԱԶԵ ղեկավար հանձնախմբի Հայաստանում 2018թ.-ի հոկտեմբերին կայացած 17-րդ նիստն օժանդակել է «Ջրի և առողջության մասին» արձանագրության համատեքստում թիրախների վերանայման և Հայաստանում խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության վերաբերյալ քննարկման անցկացմանը: Հանդիպման ժամանակ ներկայացվել և քննարկվել է ազգային փորձագետների (ծրագրի աշխատանքային խմբի անդամներ) կողմից հավաքագրված ելակետային տեղեկատվությունը:

«Ջրի և առողջության մասին» արձանագրության հիմնական ոլորտներում գիտելիքներ և փորձ ունեցող ազգային խորհրդատուները հավաքագրել են անհրաժեշտ տեղեկատվությունը և պատրաստել ելակետային իրավիճակի վերլուծության նախագիծ՝ ղեկավար հանձնախմբի կողմից քննարկման համար:

2019թ.-ի փետրվարի 19-ին տեղի է ունեցել «Ջրի և առողջության մասին» արձանագրության և ջրամատակարարման և ջրահեռացման հարցերի վերաբերյալ ազգային շահագրգիռ կողմերի խորհրդատվական հանդիպումը՝ ՀՀ շրջակա միջավայրի (նախկինում բնապահպանության) նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալության պետի, ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի փոխտնօրենի և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) ջրային կոմիտեի նախագահի տեղակալի համանախագահությամբ:

Խորհրդատվական հանդիպման նպատակն էր թարմացնել և քննարկել արձանագրության համատեքստում սահմանված և վերանայված նպատակային ցուցանիշները, ինչպես նաև ջրային ոլորտի օրենսդրական դաշտի վերլուծությունը՝ ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովման համար օրենսդրական խոչընդոտների վերհանման նպատակով: Շահագրգիռ կողմերին առաջարկվել է շրջակա միջավայրի նախարարությանը գրավոր մեկնաբանություններ ներկայացնել ելակետային վերլուծության և վերանայված նպատակների վերաբերյալ:

2019թ.-ի մայիսի դրությամբ, ազգային փորձագետներից բաղկացած աշխատանքային խումբն ավարտել է ելակետային իրավիճակի վերլուծության ուղղությամբ տարվող աշխատանքը և շահագրգիռ կողմերի ներկայացրած մեկնաբանությունների հիման վրա վերջնականացրել է արձանագրության ներքո նախնական նպատակային ցուցանիշների և նպատակային ժամկետների սահմանումը: Նախնական նպատակային ցուցանիշները և նպատակային ժամկետները ներկայացվել են շրջակա միջավայրի նախարարությանը՝ շահագրգիռ կողմերի շրջանում շրջանառության մեջ դրման, դրանց վերաբերյալ առաջարկությունների ներկայացման և հետագայում 2019թ.-ի նոյեմբերին Բելգրադում կայանալիք «Ջրի և առողջության մասին» արձանագրության Կողմերի 5-րդ հանդիպման կողմից հաստատման համար:

## Հապավումների ցանկ

ԱԻՆ	Արտակարգ իրավիճակների նախարարություն
ԱՀԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
ԱՄՆ ՄՁԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալություն
ԱՆ	Առողջապահության նախարարություն
ԱԲԵ	Ազգային քաղաքականության երկխոսության
ԳԱԱ	Գիտությունների ազգային ակադեմիա
ԵՄ	Եվրոպական միություն
ԵՄՁՆ	Եվրոպական Միության ջրային նախաձեռնություն
ԿՉՆ-ներ	Կայուն զարգացման նպատակներ
ԿՄԿ	Կեղտաջրերի մաքրման կայան
ՀԾԿՀ	Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀԿՀԱԱՇՄ	Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՉՆ-ներ	Հազարամյակի զարգացման նպատակներ
ՀԿԿԱԿ	Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն
ՄԱԿ-ի ԵՏՀ	Միավորված ազգերի կազմակերպության եվրոպական տնտեսական հանձնաժողով
ՄԱՉԾ	ՄԱԿ-ի Չարգացման ծրագիր
ՇՄՄՏԿ	Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն
ՇՄՆ	Շրջակա միջավայրի նախարարություն
ՊՄԳ	Պետություն-մասնավոր գործընկերություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ԶԿ	Զրային կոմիտե
ԶՈԿԳ	Զրային ռեսուրսների կառավարման գործակալություն
ԶՈՀԿ	Զրային ռեսուրսների համապարփակ կառավարում
ԶՕԸ	Զրոգտագործողների ընկերություն
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՎԼՀ	Վեճերը լուծող հանձնաժողով
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն
ՓԾ	Փրկարար ծառայություն

Ամփոփում.....	3
Հապավումների ցանկ.....	4
ՄԱՍ I. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.....	7
ՄԱՍ II. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ.....	26
Թիրախային ոլորտ I. Մատակարարվող խմելու ջրի որակը .....	27
Թիրախային ոլորտ II. Ջրի հետ կապված բնկումների և հիվանդությունների կրճատում.....	31
Թիրախային ոլորտ III. Խմելու ջրի հասանելիություն.....	35
Թիրախային ոլորտ IV. Ջրահեռացման հասանելիություն.....	39
Թիրախային ոլորտ XI. Կեղտաջրերի մաքրման կայաններից արձանագրության իրավասության սահմաններում գտնվող ջրերի մեջ արտահոսած կեղտաջրերի որակը.....	43
Թիրախային ոլորտ XIV. Խմելու ջրի աղբյուր հանդիսացող ջրերի որակը.....	46
Թիրախային ոլորտ XVIII. Հատկապես աղտոտված տարածքների հայտնաբերում և մաքրում.....	48
Թիրախային ոլորտ XIX. Ջրային ռեսուրսների կառավարման, զարգացման, պահպանման և օգտագործման համակարգերի արդյունավետությունը.....	50
Թիրախային ոլորտ XX. Մատակարարվող խմելու ջրի և այլ ջրերի որակի վերաբերյալ տեղեկատվության հրապարակման հաճախականությունը.....	53





### Ներածություն

2012թ.-ի սեպտեմբերին ՄԱԿ-ի ԵՏՅ-ն և Ֆինլանդիայի կառավարությունը ՄԱԿ-ի ԵՏՅ - FinWaterWei<sup>2</sup> ««Ջրի և առողջության մասին» արձանագրություն: Հայաստանում առողջության բարելավում՝ նպատակային ցուցանիշների սահմանման միջոցով՝ ջրի կայուն կառավարում, անվտանգ խմելու ջրի մատչելիություն և պատշաճ ջրահեռացում ապահովելու նպատակով»» ծրագրի շրջանակում ստորագրեցին համաձայնագիր՝ Հայաստանում «Ջրի և առողջության մասին» արձանագրության շրջանակում նպատակային ցուցանիշների սահմանման գործընթացին աջակցություն ցուցաբերելու նպատակով:

Ծրագրի հիմնական նպատակն էր՝ աջակցել Հայաստանին ազգային և/կամ տեղական նպատակային ցուցանիշների ու նպատակային ժամկետների սահմանմանը, ինչպես նաև արձանագրությամբ սահմանված ինդիկատորների շուրջ քաղաքականության երկխոսության և որոշումների կայացման համար հարթակի ապահովման միջոցով նպաստել «Ջրի և առողջության մասին» արձանագրության վավերացմանը: Ծրագիրն իրականացվել է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի և առողջապահության նախարարությունների հետ սերտ համագործակցությամբ և տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մասնակցությամբ: ՀԿՀԱԿՇՄ ՀԿ-ն խորհրդատվական հանդիպումների միջոցով նպատակների սահմանման գործընթացի բոլոր փուլերում պատասխանատու է եղել ՀԿ-ների կողմից աջակցության համակարգման համար:

«Ջրի և առողջության մասին» արձանագրության համատեքստում սահմանվել են ազգային նպատակային ցուցանիշները և ցուցանիշներին հասնելու ժամկետները, ինչպես նաև ծրագրի շրջանակում մշակվել են դրանց իրականացման գործողությունների պլանը և արձանագրության վավերացման ճանապարհային քարտեզը: Նախնական նպատակային ցուցանիշները հաստատվել են 2014թ. մայիսի 6-ին Հայաստանում ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման (ՋՌՀԿ) հարցերով Եվրամիության ջրային նախաձեռնության ազգային քաղաքականության երկխոսության ղեկավար հանձնախմբի 12-րդ նիստում: Նպատակային ցուցանիշները պաշտոնապես չեն ընդունվել:

ՄԱԿ-ի ԵՏՅ-ն աջակցություն է ցուցաբերել նաև Հայաստանում ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ուղղությամբ իրականացվող աշխատանքներում: ՄԱԿ-ի զարգացման հաշիվներ (ՄԱԶՀ) ծրագրի շրջանակում 2017թ.-ին պատրաստվել է «Հայաստանում ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովման 2018-2020 թվականների գործողությունների ծրագիր»-ը: Այն մշակել է ՀԿՀԱԿՇՄ ՀԿ-ն 2015-2016 թվականներին ՄԱԿ-ի ԵՏՅ-ի ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ինքնազնադատման քարտի իրականացման արդյունքների հիման վրա: Ծրագրի իրականացմանն աջակցել է Ֆրանսիայի կառավարությունը: Գործողությունների ծրագիրը հաստատվել է 2017թ.-ի օգոստոսի 4-ին՝ ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի թիվ 130-Ա հրամանով:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունն Արևելյան գործընկերության երկրների համար ԵՄՁԼ+ ծրագրի մաս է, որն անդրադառնում է ջրային պաշարների արդյունավետ կառավարման բարելավման և իրականացման ոլորտում առկա հիմնախնդիրներին: 2016-2020 թվականների ընթացքում Արևելյան Եվրոպայում և Կովկասի երկրներում ԵՄՁԼ պլյուս ծրագրի հիմնական նպատակն է բարելավել ջրային ռեսուրսների, մասնավորապես՝ անդրսահմանային ռեսուրսների կառավարումը: Եվրամիության կողմից ԵՄՁԼ+ ծրագրի ֆինանսավորմամբ (պատվիրակության համաձայնագիր ENI/2016/381-404) ՄԱԿ-ի ԵՏՅ-ն աշխատում է Արևելյան Եվրոպայի և Կովկասի վեց երկրի հետ՝ առաջիկա տարիներին ազգային քաղաքականությունները և ռազմավարությունները ԵՄ Ջրի շրջանակային դիրեկտիվի, Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման (ՋՌՀԿ) և համապատասխան շրջակա միջավայրի մասին բազմակողմանի համաձայնագրերի, ինչպես, օրինակ, Ջրային կոնվենցիայի և դրան կից «Ջրի և առողջության մասին» արձանագրության սկզբունքներին մոտարկելու ուղղությամբ:

ԵՄՁԼ+ ծրագրի շրջանակում, ՄԱԿ-ի ԵՏՅ-ի և ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի (ՄԱԶԾ) աջակցությամբ, 2017թ.-ի դեկտեմբերի 5-ին Երևանում տեղի ունեցավ «Ջրի և առողջության մասին» արձանագրության և ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության վերաբերյալ խորհրդատվական հանդիպումը, որի ժամանակ կայացվեց որոշում՝ վերանայել արձանագրության ներքո սահմանված ազգային թիրախները՝ հաշվի առնելով վերջերս տեղի ունեցած ազգային և համաշխարհային զարգացումները, ինչպես օրինակ՝ Հայաստանի և ԵՄ-ի միջև Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կնքումը և կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ-ներ) ընդունումը: Նաև որոշվեց սկսել իրականացնել ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության գործողությունների ծրագրի առաջին միջոցառումը (Ջրի և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովման նպատակով ջրային օրենսդրության վերլուծություն և խոչընդոտների վերհանում):

2. FinWaterWei-ը ֆինլանդիայի ջրային հատվածի՝ Ընդլայնվող Եվրոպայի նախաձեռնության ներքո ԱԵԿԿԿ երկրներ-րին աջակցության ծրագիրն է: FinWaterWEI ծրագիրը ղեկավարվում է ֆինլանդիայի արտաքին գործերի նախարարության անունից՝ ֆինլանդիայի շրջակա միջավայրի ինստիտուտի (SYKE) կողմից (<http://www.environment.fi/default.asp?contentid=405313&lan=EN>)

## ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Համաձայն «Ջրի և առողջության մասին» արձանագրության 7-րդ հոդվածի, արձանագրության կողմ հանդիսացող յուրաքանչյուր երկիր պետք է պարբերաբար վերանայի երկրի կողմից սահմանված թիրախների իրականացումը, գնահատի և սահմանի նոր թիրախներ: Չլինելով արձանագրության կողմ երկիր, Հայաստանի Հանրապետությունը 2014թ.-ին սահմանել է իր նախնական թիրախները: ԵՄՁՆ+ ծրագրի շրջանակում, 2017թ.-ի դեկտեմբերի 5-ին Երևանում «Ջրի և առողջության մասին» արձանագրության և ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության վերաբերյալ կազմակերպված խորհրդատվական հանդիպման ժամանակ կայացվել է որոշում՝ վերանայել արձանագրության ներքո սահմանված ազգային նպատակային ցուցանիշները:

Սույն ծրագրի շրջանակում նպատակային ցուցանիշների վերանայման մեթոդաբանությունը հիմնված է եղել «Նպատակային ցուցանիշների սահմանման, ընթացքի գնահատման և հաշվետվությունների կազմման ուղեցույցի» վրա, որը մշակվել է ՄԱԿ-ի ԵՏՀ-ի և Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) եվրոպական տարածաշրջանային գրասենյակի կողմից:

### Հիմնական շահագրգիռ կողմերի բացահայտում և համակարգող մեխանիզմի ստեղծում

- Ծրագրի կառավարումն իրականացվել է ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման և ջրամատակարարման ու ջրահեռացման հարցերով ազգային քաղաքականության երկխոսության ղեկավար հանձնախմբի միջոցով: Դեկավար հանձնախումբը բաղկացած է նախարարությունների, գիտական հանրության և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից:
- Ծրագրի հիմնական արդյունքները ստեղծվել են արձանագրության հիմնական ոլորտներով զբաղվող փորձագետներից բաղկացած ազգային աշխատանքային խմբի կողմից:
- Ազգային շահագրգիռ կողմերի խորհրդատվական հանդիպման նպատակն էր թարմացնել և քննարկել «Ջրի և առողջության մասին» արձանագրության համատեքստում սահմանված և վերանայված նպատակային ցուցանիշները:

### Ելակետային իրավիճակի վերլուծություն

Ելակետային իրավիճակի վերլուծությունն առաջին տեխնիկական քայլն էր նպատակային ցուցանիշների սահմանման գործընթացում և ներառում էր ամկա իրավական շրջանակների (ազգային և միջազգային), երկրի ինստիտուցիոնալ և ֆինանսական կարգավորումների և Հայաստանում բնապահպանական և առողջապահական իրավիճակի վերլուծությունը՝ կապված արձանագրության բոլոր քսան ոլորտների հետ: Մշակված տեխնիկական զեկույցում ներառված են եղել ելակետային իրավիճակի վերլուծության արդյունքները, որոնք հետագայում հիմք են հանդիսացել նպատակային ցուցանիշների և դրանց հասնելու նպատակային ժամկետների սահմանման համար:

Ելակետային իրավիճակի վերլուծությունը վերջնականացվել է 2018թ.-ի հոկտեմբերին և ներկայացվել ԵՄՁՆ ԱԹԵ ղեկավար հանձնախմբի 17-րդ նիստի ժամանակ (հոկտեմբեր 2018թ.): Ելակետային իրավիճակի վերլուծության վրա հիմնված տեխնիկական զեկույցը պատրաստվել է երկու լեզվով՝ հայերեն և անգլերեն:

### Խնդիրների բացահայտում և գերակայությունների սահմանում

Աշխատանքային խմբի փորձագետներն արձանագրության քսան թիրախային ոլորտից ընտրել են ինը և ներկայացրել 2019թ.-ի փետրվարին կայացած ազգային շահագրգիռ կողմերի խորհրդատվական հանդիպման ժամանակ: Հանդիպման մասնակիցները, ողջունելով ներկայացված զեկույցները, հանդես են եկել խնդրանքով, որպեսզի բոլոր առանցքային շահագրգիռ կազմակերպությունները վերանայված նպատակների և գործողությունների նախագծերի վերաբերյալ ներկայացնեն գրավոր առաջարկներ: Ազգային շահագրգիռ կողմերի խորհրդատվական հանդիպման մասնակիցները հույս են հայտնել, որ ԵՄՁՆ+ ծրագրի շրջանակում փորձագետները կներառեն շահագրգիռ հաստատությունների մեկնաբանությունները և վերջնական տարբերակը կներկայացնեն ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը՝ շահագրգիռ կողմերի շրջանում շրջանառության մեջ դրման և հետագա պաշտոնական հաստատման համար:

### Նախագծված թիրախների, միջոցառումների ծրագրի և ցուցանիշների համաձայնեցում

Ելակետային վերլուծությունը շրջանառության մեջ դնելուց հետո, շահագրգիռ կազմակերպություններն աշխատանքային խմբին ներկայացրել են մեկնաբանություններ, որոնք ներառվել են աշխատանքային փաստաթղթում: Նպատակային ցուցանիշների ու նպատակային

Ժամկետների և դրանց հասնելու միջոցառումների վերջնական տարբերակը ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարությանը՝ հետագա պաշտոնական հաստատման համար:

**Ընթացքի գնահատում և վերանայում, հաշվետվությունների ներկայացում**

Հայաստանը շարունակաբար վերահաստատում է «Ջրի և առողջության մասին» արձանագրության սկզբունքներն իրականացնելու իր մտադրությունը: 2019թ.-ի ապրիլին Հայաստանը ներկայացրել է իր չորրորդ պաշտոնական գեկույցը ՄԱԿ-ի ԵՏՀ-ի «Ջրի և առողջության մասին» արձանագրության քարտուղարությանը:

**ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԻՐԱԿԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

**ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴՆՇՏ**

Ներկայումս հանրապետությունում մեծ ուշադրություն է դարձվում ջրային պաշարների արդյունավետ կառավարմանը, զարգացմանը և օգտագործմանը: Այս ոլորտի կանոնակարգման նպատակով վերջին տարիներին երկրի օրենսդիր և գործադիր մարմինների կողմից ընդունվել են բազմաթիվ օրենքներ, օրենսդրական ակտեր, որոշումներ և այլ փաստաթղթեր, որոնց հիման վրա իրականացվել են մի շարք բարեփոխումներ:

**Ոլորտը կարգավորող հիմնական իրավական ակտերը**

Իրավական ակտի տեսակը	Անվանումը	Ընդունման տարեթիվը	Մեկնաբանություն
Օրենսգիրք	Ջրային օրենսգիրք	2001	Սույն օրենսգիրքը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը՝ ելնելով հողի կարևոր բնապահպանական, տնտեսական ու սոցիալական նշանակությունից, որի շնորհիվ Հայաստանի Հանրապետությունում հողն օգտագործվում և պահպանվում է որպես ժողովրդի կենսագործունեության պայման: Օրենսգրքի 26-րդ հոդվածը սահմանում է ջրային հողերը և դրանց օգտագործման կարգը:
Օրենսգիրք	Ջրային օրենսգիրք	2002	Օրենսգիրքը ջրային ոլորտի հասկացությունները և հարաբերությունները սահմանող և կարգավորող հիմնական իրավական փաստաթուղթն է: Ջրային օրենսգիրքը կարգավորում է ջրային ռեսուրսների և համակարգերի պահպանման, օգտագործման, բաշխման հետ կապված խնդիրները, ինչպես նաև սահմանում է մասնավոր հատվածի ներգրավման սկզբունքներն ու ձևերը:

Օրենք	ՀՀ բնակչության սանիտարա-համաճարակային անվտանգության ապահովման մասին	1992	Օրենքը սահմանում է ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման իրավական, տնտեսական և կազմակերպական հիմքերը, ինչպես նաև պետության կողմից նախատեսվող այն երաշխիքները, որոնք բացառում են մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար և վտանգավոր գործոնների ազդեցությունը և բարենպաստ պայմաններ ապահովում նրա և ապագա սերունդների կենսունակության համար: Ջրամատակարարման և ջրօգտագործման բնագավառին վերաբերվող հիմնական պահանջները շարադրված են օրենքի 16-րդ հոդվածում:
Օրենք	Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին	1996	Սույն օրենքը սահմանում է մարդու առողջության պահպանման սահմանադրական իրավունքի իրականացումն ապահովող բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման, իրավական, տնտեսական և ֆինանսական հիմունքները: Շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությամբ տառապող մարդու իրավունքն արտացոլված է օրենքի 11-րդ հոդվածում:
Օրենք	Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին	1998	Սույն օրենքը սահմանում է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության հիմքերն ու կազմակերպումը, այդ բնագավառում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների՝ անկախ կազմակերպական-իրավական տեսակից, ինչպես նաև պաշտոնատար անձանց և քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները:
Օրենք	Սևանա լճի մասին	2001	Օրենքը սահմանում է Սևանա լճի՝ որպես Հայաստանի Հանրապետության բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, կլիմայական, ռեկրեացիոն (վերականգնողական) և հոգևոր արժեք ունեցող ռազմավարական նշանակության էկոհամակարգի բնականոն զարգացման, վերականգնման, բնական պաշարների վերարտադրման (այսուհետև՝ վերարտադրություն), պահպանման և դրանց օգտագործման պետական քաղաքականության իրավական ու տնտեսական հիմունքները: Սևանա լիճը Հայաստանի Հանրապետության քաղցրահամ ջրերի ռազմավարական շտեմարանն է:

Օրենք	Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին	2017	Օրենքում ամրագրված են Սևանի լճի էկոհամակարգի կայունության, ջրի դրական հաշվեկշռի ապահովման և բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման դրույթները, որոնց կատարման անհրաժեշտ պայմաններից է՝ լճի մակարդակի բարձրացումն առնվազն 6 մետրով:
Օրենք	Տեղեկատվության ազատության մասին	2003	Սույն օրենքը կարգավորում է տեղեկատվության ազատության հետ կապված հարաբերությունները, սահմանում է տեղեկատվության ապահովման բնագավառում տեղեկատվություն տնօրինողների իրավասությունը, ինչպես նաև տեղեկություններ ստանալու կարգը, ձևերը և պայմանները: Օրենքի գործողությունը տարածվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների և դրանց պաշտոնատար անձանց վրա:
Օրենք	Զրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին	2005	Օրենքը ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի ռազմավարական օգտագործման և պահպանության հեռանկարային զարգացման հայեցակարգ է: Սույն օրենքի նպատակն է ներկայում և ապագայում մարդու բարեկեցության, հանրապետության սոցիալ-տնտեսական համակարգի զարգացման, տնտեսա-էկոլոգիական կարիքները բավարարելու համար անհրաժեշտ քանակի և որակի ջրային ռեսուրսների մատչելիության ապահովումը:

Օրենք	Ջրի ազգային ծրագրի մասին	2006	<p>Օրենքը ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի հեռանկարային զարգացման հիմնական փաստաթուղթն է, որով իրականացվում են ջրային օրենսգրքով սահմանված խնդիրները: Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի սահմանման և իրականացման հետ կապված հարաբերությունները՝ ընդգրկելով ազգային ջրային պաշարի, ռազմավարական ջրային պաշարի, օգտագործելի ջրային ռեսուրսների գնահատականները, ջրերի նկատմամբ առաջարկը և պահանջարկը, ջրային բնագավառի պահպանման և զարգացման հիմնական խնդիրները և հեռանկարները:</p> <p>Ջրի ազգային ծրագրի իրականացման միջոցառումները ելնում են ջրի սահմանափակ լինելու, մարդու կյանքի և առողջության, կենդանական և բուսական աշխարհի պահպանման համար հիմնական միջոցներից մեկը հանդիսանալու, դրա մատչելիության ապահովման նախապայմաններից:</p> <p>Օրենքի նպատակն է օգտագործելի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով բնակչության և տնտեսության պահանջների բավարարման, շրջակա միջավայրի էկոլոգիական կայունության ապահովման, ռազմավարական ջրային պաշարի կազմավորման և օգտագործման, ազգային ջրային պաշարի պահպանության, ՀՀ ջրային օրենսգրքի և «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների սահմանումը:</p>
Օրենք	ՀՀ ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին	2018	<p>Օրենքի համաձայն, համապարփակ կերպով կարգավորվում են ջրահեռացման իրավահարաբերությունները, ինչպես նաև սահմանվում են կեղտաջրերի և ջրահեռացման համակարգերի տեսակները և ըստ տեսակների՝ կեղտաջրերի հեռացմանը, մաքրմանը և մոնիտորինգին ներկայացվող պահանջները: Օրենքն ուժի մեջ է մտնելու 2020 թվականի հունվարի 1-ից: Միաժամանակ, անցումային դրույթներում ամրագրված միջոցառումների ժամկետները համապատասխանեցվել են կայուն զարգացման նպատակի ժամկետներին:</p>
Կառավարության որոշում	Շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների ցանկը հաստատելու մասին	2001	<p>Որոշումը ներառում է ջրով փոխանցվող բոլոր տեսակների վարակիչ հիվանդությունները՝ աղիքային վարակիչ հիվանդություններ (բոլոր ձևերը), վիրուսային հեպատիտներ, տուլարեմիա և այլն: Բուժման ծավալները ներառվում են յուրաքանչյուր տարի հաստատվող պետական պատվերի չափանիշներում՝ վարակիչ հիվանդությունների մասով:</p>

Կառավարության որոշում	Հողային պաշարների պետական կառավարման լիազոր մարմիններ սահմանելու մասին	2002	Որոշման համաձայն, սանիտարական պահպանման գոտիների օգտագործման սանիտարական սահմանափակումների և Նորմերի սահմանման պետական լիազորված մարմին է հանդիսանում առողջապահության նախարարությունը:
Կառավարության որոշում	Ջրօգտագործման թույլտվության օրինակելի ձևաթուղթը և ջրօգտագործման թույլտվության ձևերը հաստատելու մասին	2003	Այս որոշմամբ կոմունալ-կենցաղային, բուժիչ և առողջապահական նպատակներով ջրօգտագործման դեպքում պարտադիր պահանջվում է համապատասխան փաստաթուղթ (եզրակացություն)՝ տրված Հայաստանի Հանրապետության առողջապահական տեսչական մարմնի կողմից:
Կառավարության որոշում	Չբուսաշրջության, մարզական և ռեկրեացիոն կարիքների համար ջրային ռեսուրսների օգտագործման կարգը հաստատելու մասին	2003	Սույն կարգով կանոնակարգվում է Հայաստանի Հանրապետության տարածքում Չբուսաշրջության, մարզական և ռեկրեացիոն կարիքների համար ջրային ռեսուրսների օգտագործման գործընթացը:
Կառավարության որոշում	Ազատ ջրօգտագործման կարգը հաստատելու մասին	2003	<p>1. Սույն կարգով կանոնակարգվում են ազատ ջրօգտագործմանն առնչվող իրավահարաբերությունները, բացառությամբ, Չբուսաշրջության, մարզական և ռեկրեացիոն կարիքների համար ջրային ռեսուրսների, անձի սեփականություն հանդիսացող հողամասում գրունտային ջրերի, հակահրդեհային նպատակներով ազատջրօգտագործման, որոնք կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած առանձին կարգերով:</p> <p>6. Բնապահպանության նախարարությունը, հիմք ընդունելով մարդկանց առողջության համար ջրային ռեսուրսի վտանգավորության մասին առողջապահության բնագավառում լիազոր մարմնի ներկայացրած տեղեկատվությունը, կարող է սահմանափակել կամ կասեցնել ազատ ջրօգտագործումը՝ ըստ ջրային ռեսուրսի (ռեսուրսների) կամ դրա (դրանց) մասի (մասերի), եթե՝</p> <p>ա) տվյալ տարածաշրջանում հայտնաբերվել են համաճարակի դեպքեր, և առկա է ջրի միջոցով փոխանցվող հիվանդությունների տարածման վտանգ.</p> <p>բ) ջրային ռեսուրսն աղտոտված է այն չափով, որ կարող է վնաս հասցնել մարդկանց կյանքին և առողջությանը:</p>
Կառավարության որոշում	Կեղտաջրերի և ցամաքորդային ջրերի ընդունման համար կլանող հորատանցքերի, սպառված հանքավայրերի, հանքահորերի ու բաց հանքերի օգտագործման և արտահոսքի թույլտվության կարգը հաստատելու մասին	2003	Սույն որոշումը հաստատում և սահմանում է կեղտաջրերի և ցամաքորդային ջրերի ընդունման համար կլանող հորատանցքերի, սպառված հանքավայրերի, հանքահորերի ու բաց հանքերի օգտագործման և արտահոսքի թույլտվության տրամադրման կարգը:

Կառավարության որոշում	Ջրահեռացման համակարգերի օգտագործման և հեռացվող ջրերի մաքրման կանոնները սահմանելու մասին	2003	Սույն կանոններում ամրագրված դրույթները տարածվում են ջրահեռացման համակարգերը սեփականության կամ օգտագործման իրավունքով օգտագործող (շահագործող) և տնօրինող կազմակերպությունների վրա:  Ջրահեռացման համակարգերը կարող են օգտագործվել (շահագործվել) դրանց սեփականատերերի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով որոշակի ժամկետով օգտագործման (շահագործման) իրավունք ձեռք բերած կազմակերպությունների կողմից:
Կառավարության որոշում	Ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության արտակարգ իրավիճակի ռեժիմներ սահմանելու կարգի, հրահանգների և բնակչությանը մատակարարվող խմելու ջրի նվազագույն չափաքանակների, ինչպես նաև ջրային համակարգի կառավարչի կրած վնասների փոխհատուցման կարգի մասին	2005	Այս որոշմամբ հաստատվել է ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության արտակարգ իրավիճակի ռեժիմներ սահմանելու կարգը, հրահանգները, բնակչությանը մատակարարվող խմելու ջրի նվազագույն չափաքանակները, ինչպես նաև ջրային համակարգի կառավարչի կրած վնասների փոխհատուցման կարգը:
Կառավարության որոշում	Ջրերի ստանդարտների սահմանման կանոնակարգերի մասին	2005	Այս որոշմամբ սահմանվում են խմելու-տնտեսական և կուլտուր-կենցաղային (մարդկանց կարիքները բավարարելու), ոռոգման, արդյունաբերական նպատակներով օգտագործվող անհրաժեշտ ջրի որակի սահմանման ստանդարտները, ինչպես նաև մակերևութային ջրային ռեսուրս թափվող կեղտաջրերում վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքերի չափանիշների որոշման կանոնակարգերը:
Կառավարության որոշում	Սևանա լճի ջրհավաք ավազանի կենտրոնական և անմիջական ազդեցության գոտիների բնակավայրերում և բնակավայրերից դուրս օբյեկտների շահագործումից առաջացող կեղտաջրերի մաքրման մասին	2006	Սևանա լճի Էկոլոգիական հավասարակշռության վերականգնման խնդրում դրա համապատասխան որակի ջրի ապահովման, ջրհավաք ավազանում գոյություն ունեցող առանձին օբյեկտներից առաջացած կեղտաջրերի մաքրման, ինչպես նաև ափամերձ տարածքում ռեկրեացիոն (հանգիստ և տուրիզմ) տնտեսաճյուղի առավել արդյունավետ զարգացումն ապահովելու նպատակով որոշում է սահմանել, որ Սևանա լճի ափամերձ տարածքում գոյություն ունեցող առանձին օբյեկտներից առաջացող կեղտաջրերը, մինչև Սևանա լիճ թափվելը, անհրաժեշտ է ենթարկել կենսաբանական մաքրման:
Կառավարության որոշում	«Սևան» ազգային պարկի և դրան հարող տարածքներում հողամասերի վարձակալության, կառուցապատման իրավունքի տրամադրման և քաղաքաշինական գործունեության իրականացման մասին	2008	Այս որոշմամբ սահմանվում են Սևանա լճի լողափերի կազմակերպման պահանջները, լողափի գոտու տարածքի կահավորման և սարքավորումների տարրերի տեխնիկական բնութագրերը:



Կառավարության որոշում	Կենտրոնացված կոյուղացանց չունեցող համայնքներում նոր կառուցվող օբյեկտների համար կոյուղաջրերի տեղային մաքրման կայանների պարտադիր տեղադրման նորմերը հաստատելու մասին	2009	Սույն նորմերով կանոնակարգվում են կենտրոնացված կոյուղացանց չունեցող համայնքներում նոր կառուցվող օբյեկտների (բազմաբնակարան, հասարակական և արտադրական շենքեր ու շինություններ) համար կոյուղաջրերի տեղային կենսաբանական մաքրման կայանների պարտադիր տեղադրմանը ներկայացվող պահանջները:
Կառավարության որոշում	Կախված տեղանքի անձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին	2011	Սույն որոշմամբ սահմանվում է ՀՀ մակերևութային ջրերի՝ ջրօգտագործման նպատակային նշանակության կամ որակի կարգերի փոխադարձ կապերի առաջարկվող համակարգը, ՀՀ մակերևութային ջրերի որակի նորմերը, Հայաստանի Հանրապետության տարածքի 14 խոշոր գետային ավազանների գետերի ու գետերի առանձին հատվածների ջրերի որակի էկոլոգիական նորմերը:
Կառավարության որոշում	Ջրավազանային կառավարման մոդելային պլանի բովանդակությունը հաստատելու մասին	2011	Որոշումը հիմք է հանդիսանում ջրավազանային կառավարման վեց պլանների տեխնիկական բնութագրերի կազմման և մշակման համար:
Կառավարության որոշում	ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 46-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին	2012	Սույն որոշմամբ հաստատվել է պատվաստումների ազգային նոր օրացույցը, որի համաձայն 2012 թվականի նոյեմբերից ներդրվել է ռոտավիրուսային վարակի դեմ պատվաստումը:
Կառավարության որոշում	ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր	2014	<p>Ծրագրով նախատեսվում է շարունակել խմելու ջրի համակարգերի բարեփոխումները՝ նպատակ ունենալով բարձրացնելու համակարգերի շահագործման հուսալիությունն ու արդյունավետությունը և բարելավելու ջրամատակարարման ու ջրահեռացման ծառայությունների որակը՝ ուշադրության կենտրոնում պահելով տարածքային անհամաչափությունների մեղմման խնդիրը:</p> <p>Ջրահեռացման բնագավառում կարևորվում է նաև քաղաքների ու խոշոր բնակավայրերի կոյուղացման համակարգի վերակառուցումը և հեռացվող կեղտաջրերի մաքրման կայանների կառուցումը:</p> <p>Սակագնային քաղաքականությունը ծրագրի ժամանակահատվածում ուղղված կլինի սակագների ծախսածածկման մակարդակի աստիճանական բարձրացմանը՝ հաշվի առնելով ամենացածր եկամտային խմբի տնային տնտեսությունների համար մատչելիության հանգամանքը: Կսահմանվի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատչելի սակագնի առավելագույն շեմ, որից բարձր սակագնով ծառայությունների մատուցումը աղքատ ընտանիքների համար առաջացած տարբերության չափով կսուբսիդավորվի պետության կողմից:</p>

Կառավարության որոշում	Հայաստանի հանրապետության շրջակա միջավայրի աղտոտվածության բարձր մակարդակ ունեցող (մասնավորապես՝ հանքավայրերին հարող) տարածքներում մշտադիտարկման կարգը հաստատելու մասին	2015	Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի աղտոտվածության բարձր մակարդակ ունեցող (մասնավորապես՝ հանքավայրերին հարող) տարածքներում մշտադիտարկման արդյունավետ գործող մեխանիզմների հետ կապված հարաբերությունները:
Կառավարության արձանագրային որոշում	2016-20թթ. իմունականխարգելման ազգային ծրագրին, իմունականխարգելման ազգային ծրագրի առաջնահերթ միջոցառումների ցանկին, պատվաստումների ազգային օրացույցին, իմունականխարգելման ազգային ծրագրի ակնկալվող արդյունքներին և պատվաստման կամ կանխարգելման միջազգային վկայականի ձևին հավանություն տալու մասին	2016	Որոշմամբ շարունակվում են իրականացվել ռոտավիրուսային վարակի դեմ պատվաստումները:
Կառավարության որոշում	«Արարատյան ջրավազանային տարածքի կառավարման 2016-2021 թվականների կառավարման պլանը և արդյունավետ կառավարմանն ուղղված առաջնահերթ միջոցառումները հաստատելու մասին» որոշում  «Արարատյան ջրավազանային տարածքի կառավարման 2016-2021 թվականների միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» արձանագրային որոշում	2016	Որոշումներով հաստատվել է Արարատյան ջրավազանային տարածքի 2016-2021 թվականների կառավարման պլանը և հավանության է տրվել պլանի միջոցառումների ծրագրին: Որոշումներով սահմանվել են Արարատյան ջրավազանային կառավարման տարածքի ազգային, ռազմավարական ջրային պաշարները, օգտագործելի ջրային ռեսուրսները, ջրառաջարկն ու ջրապահանջարկը, ջրատնտեսական հաշվեկշիռը և այլն:
Կառավարության որոշում	«Հարավային ջրավազանային տարածքի 2016-2021 թվականների կառավարման պլանը և արդյունավետ կառավարմանն ուղղված առաջնահերթ միջոցառումները հաստատելու մասին» որոշում  «Հարավային ջրավազանային կառավարման տարածքի 2016-2021 թվականների կառավարման պլանի միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշում	2016	Որոշումներով հաստատվել է Հարավային ջրավազանային տարածքի 2016-2021 թթ. կառավարման պլանը և հավանության է տրվել պլանի միջոցառումների ծրագրին: Որոշումներով սահմանվել են Հարավային ջրավազանային կառավարման տարածքի ազգային, ռազմավարական ջրային պաշարները, օգտագործելի ջրային ռեսուրսները, ջրառաջարկն ու ջրապահանջարկը, ջրատնտեսական հաշվեկշիռը և այլն:
Կառավարության որոշում	Ջրային ռեսուրսների պետական կադաստրի վարման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2003 թվականի հուլիսի 23-ի N1060-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին	2017	Որոշմամբ կարգավորվել է ջրային ռեսուրսների պետական կադաստրի վարման գործընթացը, ինչպես նաև հստակ տարանջատվել է, թե որ գերատեսչությունն ինչ տեղեկատվություն և ինչ պարբերականությամբ է ներկայացնելու ջրային ռեսուրսների պետական կադաստր՝ գրանցման, ինչպես նաև սահմանվել է ջրային ռեսուրսների պետական կադաստրի կառուցվածքը, բովանդակությունը և տեղեկատվության տրամադրման ընթացակարգը:

Կառավարության որոշում	<p>«Ախուրյանի ջրավազանային տարածքի 2017-2022 թվականների կառավարման պլանը և արդյունավետ կառավարմանն ուղղված առաջնահերթ միջոցառումները հաստատելու մասին» որոշում</p> <p>«Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքի 2017-2022 թթ. կառավարման պլանի միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշում</p>	2017	Որոշումներով հաստատվել է Ախուրյանի ջրավազանային տարածքի 2017-2022թթ. կառավարման պլանը և հավանության է տրվել պլանի միջոցառումների ծրագրին: Որոշումներով սահմանվել են Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքի ազգային, ռազմավարական ջրային պաշարները, օգտագործելի ջրային ռեսուրսները, ջրառաջարկն ու ջրապահանջարկը, ջրատնտեսական հաշվեկշիռը և այլն:
Կառավարության որոշում	ՀՀ կառավարության 2004 թվականի հունվարի 22-ի N 130-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և խմելու ջուրը ոռոգման նպատակով օգտագործման կարգավորման, խմելու ջրի մատակարարման համակարգերից խմելու ջրի ապօրինի սպառումը և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) համակարգերի ապօրինի օգտագործումն արձանագրելու մասին	2017	Որոշմամբ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) համակարգերի ապօրինի օգտագործումն արձանագրելու նպատակով սահմանվում է ապօրինի սպառման սահմանումը, արձանագրման և հեռացված (մաքրված) կեղտաջրերի օրական ջրաքանակների հաշվարկման կարգը:
Կառավարության արձանագրային որոշում	ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 3-ի նիստի N 4 արձանագրության 5-րդ կետով հավանության արժանացած արձանագրային որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին	2017	Որոշմամբ ջրավազանային կառավարման պլանի բովանդակությունը համապատասխանեցվել է ՀՀ կառավարության կողմից ներկայիս վարվող քաղաքականությանը և ԵՄ Ջրային դիրեկտիվի պահանջներին:
Կառավարության արձանագրային որոշում	Ըստ գետավազանների ջրային հաշվեկշռի որոշման մեթոդին հավանություն տալու մասին	2017	Որոշմամբ հավանություն է տրվել գետավազանների ջրային հաշվեկշռի որոշման մեթոդին:
Կառավարության որոշում	ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 927-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին	2018	Որոշմամբ բնապահպանական թողքի հաշվարկման ժամանակ հաշվի է առնվում գետերի սնուցման և սեզոնային հատկությունները, բնապահպանական թողքը հաշվարկվում է ըստ ամիսների և ստացվում է 12 արժեք՝ տարվա կտրվածքով:
Կառավարության արձանագրային որոշում	Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի 2018-2030թթ. ռազմավարությանը և ֆինանսավորման ծրագրին հավանություն տալու և ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 13-ի նիստի N 38 արձանագրության 17-րդ կետով հավանության արժանացած Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի ռազմավարությանը և ֆինանսավորման ծրագրին հավանություն տալու մասին արձանագրային որոշման ուժը կորցնելու մասին	2018	ՀՀ կառավարության սույն արձանագրային որոշմամբ հավանություն է տրվում ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի 2018-2030 թվականների ռազմավարությանը և ֆինանսավորման ծրագրին, սահմանվում են ռազմավարության հիմնական նպատակը, ներկա խնդիրները, առաջարկվող լուծումները, ռիսկերը և ենթադրվող արդյունքները: Հիմնական նպատակն է ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների բարելավումը սպասարկվող և չսպասարկվող բնակավայրերում, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ոլորտների բարելավումը, որը նախկինում չի դիտարկվել որպես առաջնային խնդիր:

Նախարարի հրաման	ՀՀ առողջապահության նախարարի «Խմելու տնտեսական նշանակության ջրմուղների և ջրամատակարարման աղբյուրների սանիտարական պահպանման գոտիներ» N2-III-Ա2-2 սանիտարական նորմերը և կանոնները հաստատելու մասին» հրաման	2002	Այս հրամանով սահմանվում են խմելու տնտեսական նշանակության ջրմուղների և ջրամատակարարման աղբյուրների սանիտարական պահպանման գոտիների կազմակերպմանը և շահագործմանը ներկայացվող սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային պահանջները:
Նախարարի հրաման	ՀՀ առողջապահության նախարարի «Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներակայացվող պահանջներ: Որակի հսկողություն» N2-III-Ա2-1 սանիտարական նորմերը և կանոնները հաստատելու մասին» հրաման	2002	Այս հրամանով սահմանվում են խմելու ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջները, ինչպես նաև արտադրվող ու բնակավայրերին ջրամատակարարման համակարգերով տրվող խմելու ջրի որակի հսկողության կանոնները:
ՀՀ վիճակագրության պետական խորհրդի որոշում	Ձկնորսության և ձկնաբուծության մասին» ձև թիվ 1-ձուկ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին	2003	Սույն հրահանգը սահմանում է «Ձկնորսության և ձկնաբուծության մասին» ՁԵՎ ԹԻՎ 1- ՁՈԻԿ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության (այսուհետ՝ հաշվետվություն) լրացման կարգը:
Նախարարի հրաման	ՀՀ բնապահպանության նախարարի «Ջրային ռեսուրսներ թափվող կեղտաջրերի թուլատրելի սահմանային արտահոսքի չափաքանակների հաշվարկի մեթոդիկան հաստատելու մասին» հրաման	2003	Սույն հրամանով սահմանվում է ջրային ռեսուրսներ թափվող կեղտաջրերի թուլատրելի սահմանային արտահոսքի չափաքանակների հաշվարկի մեթոդիկան:
Նախարարի հրաման	ՀՀ առողջապահության նախարարի «Լողավազանների կառուցվածքին, շահագործմանը և ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2-III-2.2.4 սանիտարահամաճարակային կանոնները և նորմեր հաստատելու մասին» հրաման	2006	Սույն պետական սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի (այսուհետ՝ սանիտարական կանոններ) պահանջները տարածվում են ինչպես նոր կառուցվող, վերակառուցվող, այնպես էլ գործող սպորտային և առողջարարական նշանակության լողավազանների, այդ թվում՝ բացօթյա լողավազանների դպրոցական և նախադպրոցական կազմակերպությունների, առողջարարական հիմնարկների, բաղնիքային համալիրների (սաունաների) կազմում գործող լողավազանների վրա: Լողավազանների կազմում ընդգրկված սենյերին (հանդերձարան, ցնցուղարան, ավազան, սանհանգույց և այլն) ներկայացվող հիգիենիկ պահանջները տարածվում են նաև այլ հասարակական շինությունների կազմում (բաղնիքներ, սաունաներ, սպորտային դահլիճներ և այլն) շահագործվող համանման շենքերի, այդ թվում՝ և սաունաների հովացնող ավազանների վրա:
ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշում	Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման պայմանագրերի օրինակելի ձևերը սահմանելու մասին	2016	Սույն որոշմամբ սահմանվում են խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման՝ մատակարար-բնակիչ բաժանորդ և մատակարար-ոչ բնակիչ բաժանորդ պայմանագրերի օրինակելի ձևերը:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշում	Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնները սահմանելու մասին	2016	Սույն կանոններով սահմանվում են մատակարարի կողմից բաժանորդին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման, ինչպես նաև մատակարարի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին միացման հետ կապված մատակարարի և բաժանորդի, մատակարարի և դիմող անձի փոխհարաբերությունները:
Նախարարի հրաման	ՀՀ առողջապահության նախարարի «Ռեկրեացիոն նպատակով ջրօգտագործման վայրերում մակերևութային ջրային ռեսուրսների ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.1.5.001-18 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» հրաման	2018	Սույն սանիտարական կանոնները և նորմերը սահմանում են ռեկրեացիոն (հանգստի, սպորտի (մարզական) և լողի) նպատակով ջրօգտագործման վայրերում մակերևութային ջրային ռեսուրսների ջրի որակին ներկայացվող հիգիենիկ նորմերը, մակերևութային ջրային ռեսուրսների ջրի որակի գնահատումը ըստ հիգիենիկ ցուցանիշների:
Նախարարի հրաման	ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի ջրային կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» հրաման	2018	Համաձայն հրամանի, պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերի կառավարումն ու անվտանգ օգտագործման ապահովումը, ինչպես նաև իր իրավասության սահմաններում ջրի ազգային ծրագրի իրականացման ապահովումը հանդիսանում են կոմիտեի նպատակներն ու խնդիրները:

**Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունները միջազգային բնապահպանական կանոնների ներդրման ուղղությամբ**

Հայաստանի Հանրապետությունը 1992թ. ՄԱԿ-ի ԵՏՀ-ի «Անդրսահմանային ջրային հոսքերի և միջազգային լճերի պաշտպանության և օգտագործման մասին կոնվենցիային» (Ջրային կոնվենցիա) կից **«Ջրի և առողջության մասին» արձանագրությունը** ստորագրել է 1999թ.-ի հունիսի 17-ին, Լոնդոնում, սակայն դեռ չի վավերացրել:

Հայաստանի Հանրապետությունը 1992թ. ՄԱԿ-ի **Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիան** վավերացրել է 1993թ.-ի մայիսի 14-ին:

Հայաստանի Հանրապետությունը **«Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին»** 1998թ.-ի Օրհուսի կոնվենցիան վավերացրել է 2001թ.-ի մայիսի 14-ին:

Եվրամիություն - Հայաստան **Համապարփակ և ընդլայնված գործընկերության մասին նոր համաձայնագիրը** ստորագրվել է 2017թ.-ին: Համաձայնագիրը ներառում է պարտավորություններ Հայաստանի համար ջրի որակի և ռեսուրսների կառավարման ոլորտում իր օրենսդրության՝ հետևյալ հինգ դիրեկտիվների՝ Ջրի շրջանակային դիրեկտիվ, Հեղեղումների դիրեկտիվ, Զաղաքային կեղտաջրերի մաքրման դիրեկտիվ, Խմելու ջրի դիրեկտիվ և Նիտրատների դիրեկտիվ, պահանջների մոտարկմանն ուղղված միջոցառումների մասով:

## ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Ջրային օրենսգրքի համաձայն, ոլորտի կառավարումն իրականացվում է հետևյալ մարմինների կողմից.

- **ՀՀ շրջակա միջավայրի նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալությունն** օրենքով, իսկ առանձին դեպքերում՝ նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում մատուցում է ծառայություններ ջրային ռեսուրսների (մակերևութային և ստորերկրյա) կառավարման բնագավառում՝ հանդես գալով Հայաստանի Հանրապետության անուկից:
- **ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների ջրային կոմիտեն** պատասխանատու է ջրամատակարարման և ջրահեռացման կազմակերպման, ջրային համակարգերի կառավարման և դրանց անվտանգ օգտագործման համար:
- **ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը** պատասխանատու է սակագնային քաղաքականության համար:

Հայաստանում «Ջրի և առողջության մասին» արձանագրության շրջանակում հիմնական շահագրգիռ կողմերն են՝

- ա) շրջակա միջավայրի նախարարությունը,
- բ) առողջապահության նախարարությունը,
- գ) տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը:

«Ջրի և առողջության մասին» արձանագրությունում ընդգրկված տարբեր ասպեկտներում որոշակի դերակատարություն ունեցող այլ հաստատություններն են՝

- **Ջրի ազգային խորհուրդը** ջրային ռեսուրսների կառավարման բնագավառում բարձրագույն խորհրդատվական մարմինն է, որն առաջարկություններ է ներկայացնում ջրի ազգային քաղաքականության, ջրի ազգային ծրագրի և բնագավառին վերաբերող այլ իրավական ակտերի վերաբերյալ: Ջրի ազգային խորհրդի նախագահը Հայաստանի Հանրապետության վարչապետն է:
- **Վեճերը լուծող հանձնաժողովը** կարող է լուծել ջրային հարաբերություններում ծագած ջրօգտագործման թույլտվություններին առնչվող վեճերը:

Ջրային ռեսուրսների առավել արդյունավետ, նպատակային և ապակենտրոնացված կառավարումը խթանելու նպատակով ՁՌԿԳ-ի կազմում ստեղծվել է **6 ջրավազանային տարածքային կառավարման բաժին** (Հյուսիսային, Ախուրյան, Արարատյան, Սևան, Հրազդան և Հարավային):

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «**Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն**» (ՇՄՄՏԿ) **ՊՈԱԿ**-ի գործունեության հիմնական առարկան և նպատակներից է շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների (բացառությամբ օգտակար հանածոների պաշարների) պահպանության բարձր մակարդակի ապահովմանը նպաստելը՝ շրջակա միջավայրի և բնական պաշարների նկատմամբ դիտարկումների իրականացման, վիճակի գնահատման վերաբերյալ բավարար տվյալների ստեղծման, դրանց գրանցման, վերլուծման, տրամադրման ու պահման միջոցով: ՇՄՄՏԿ-ն օրենքով սահմանված կարգով իրականացնում է ջրերի ֆիզիկական, քիմիական և կենսաբանական ներգործությունների, աղտոտիչ նյութերի տարածման ու դրանց հետևանքների դիտարկումներ, գնահատումներ և կանխատեսումներ:

**ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կենսառեսուրսների կառավարման գործակալությունն** իրականացնում է Հայաստանի կենսառեսուրսների կառավարում և պահպանություն:

**ՀՀ առողջապահության նախարարությունը** պատասխանատու է բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման համար: Իր կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով նախարարությունը մշակում և վերահսկում է սանիտարահամաճարակային կանոնակարգերի և ստանդարտների իրագործումը՝ այդ թվում, խմելու ջրի հատվածի համար: Այն նաև դիտարկումների միջոցով վերահսկում է խմելու նպատակով օգտագործվող ջրի աղբյուրների որակը:

**ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ**-ը պատասխանատու է հետևյալի համար. (i) վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման համար ինտեգրված միջոցառումների իրականացում, (ii) վարակիչ և մակաբուժական հիվանդությունների աղբյուրների փնտազորում,

(iii) հանրային անվտանգության սպառնալիքների դեպքում բնակչության պատրաստվածության և արձագանքման կարողությունների ապահովում, (iv) բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության դիտարկում, վերլուծություն և գնահատում, և (v) բնակչության առողջության վրա բնապահպանական գործոնների հասարակական-հիգիենիկ մշտադիտարկման իրականացում:

**ՀՀ ֆինանսների նախարարությունը** պատասխանատու է ոլորտին առնչվող բյուջետային և ֆինանսավարկային քաղաքականության համար:

**ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը** գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում է Հայաստանի Հանրապետության կառավարության տնտեսական զարգացման քաղաքականությունը:

**ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը** մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքով իրեն վերապահված գործունեության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը, որի հիմնական նպատակներն են՝ քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության միասնական պետական քաղաքականության մշակումը, իրականացման համակարգումը, բնակչության տարահանման և պատասխարման գործընթացների պետական կարգավորման քաղաքականության մշակումն ու դրա իրականացման աշխատանքների համակարգումը, արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման միջոցառումների կազմակերպումն ու համակարգումը, տեխնիկական անվտանգության կանոնների պահպանման ապահովումը, ՀՀ տարածքում միջազգային փրկարարական գործողություններ իրականացնող ուժերի համակարգումը, աղետների բժշկության համակարգի զարգացումը, սեյսմիկ ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացման ապահովումը, հիդրոոդերևութաբանական երևույթների ռեժիմային ու հատուկ դիտարկումների, ուսումնասիրությունների և կանխատեսումների իրականացման ապահովումը, պետական նյութական պահուստի պաշարների ձևավորումը, պահպանումն ու սպասարկումը և այլ նպատակներ:

**ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հիդրոոդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայության** հիմնական նպատակը հիդրոոդերևութաբանական գործունեության իրականացումն է, ինչպես նաև պետական նշանակության հիդրոոդերևութաբանական ծրագրերի իրականացումը, գետերի, լճերի և ջրամբարների հիդրոլոգիական ռեժիմի տարածաժամանակային օրինաչափությունների ուսումնասիրումը, մակերևութային ջրերի պետական հաշվառումը:

**ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինն** իրականացնում է վերահսկողական և (կամ) օրենքով սահմանված այլ գործառույթներ, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով կիրառում պատասխանատվության միջոցներ առողջապահության, աշխատողների առողջության և անվտանգության ապահովման բնագավառներում՝ հանդես գալով Հայաստանի Հանրապետության անունից: Այն մասնավորապես (i) ապահովում է բնակչության սանիտարական անվտանգությունը, (ii) իրականացնում է պետական հիգիենիկ և հակահամաճարակային հսկողություն, (iii) կազմակերպում է սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումներ և վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների, այդ թվում ջրային աղբույրներից ծագող հիվանդությունների դեմ պայքարի կանխարգելիչ միջոցառումներ:

**ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը** Կառավարությանը ենթակա՝ վերահսկողություն և օրենքով սահմանված այլ գործառույթներ իրականացնող պետական մարմին է, որն օրենքով սահմանված կարգով կիրառում է պատասխանատվության միջոցներ բնապահպանության և ընդերքի ոլորտներում մի շարք ուղղություններով, այդ թվում՝

- ջրային ռեսուրսները սահմանված չափաքանակներից ավելի աղտոտվելուց զերծ պահելու համար սահմանված սահմանափակումների ու Նորմերի պահպանում և ջրահավաք ավազաններում ջրային ռեժիմի սահմանափակումների պահպանում,
- ջրի ազգային ծրագրով սահմանված ջրային ռեսուրսների պահպանության և օգտագործման Նորմերի՝ չափաքանակների ու սահմանափակումների կատարում,
- ջրային ռեսուրսների պահպանության և օգտագործման (բացառությամբ ջրային համակարգերի սանիտարական պահպանության և անօտարելի գոտիների) պահանջների կատարում:

**ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը** վերահսկողություն և օրենքով սահմանված այլ գործառույթներ իրականացնող Կառավարությանը ենթակա մարմին է, որն օրենքով սահմանված կարգով կիրառում է պատասխանատվության միջոցներ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, էներգետիկայի, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառներում՝ հանդես գալով Հայաստանի Հանրապետության անունից:

**Տեղական ինքնակառավարման մարմիններն** են համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը:

**Երևանի քաղաքապետարանն** իրականացում է շրջակա միջավայրի պահպանության համայնքային ծրագրեր, բնապահպանական պետական ծրագրերով նախատեսված աշխատանքներ և Երևանի սեփականություն համարվող ենթակառուցվածքների, այդ թվում հեղեղատար համակարգերի և դիտահորերի կառավարում և դրանց շահագործման ապահովում:

Սկսած 2004թ.-ից ստեղծվեցին **ջրօգտագործողների ընկերություններ**, որոնք պատասխանատու են ոռոգման համակարգերի շահագործման համար: Ներկայումս գործում է թվով 15 ջրօգտագործողների ընկերություն:

Կենտրոնացված կարգով խմելու ջրի մատակարարման ու ջրահեռացման ոլորտներում գործող ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայություններ մատուցող մասնագիտացված ընկերությունը «**Վեոլիա Ջուր**» ՓԲԸ-ն է:

**ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնն** իրականացնում է ձկնաբուծության և ձկնաբանության, այդ թվում փափկամարմինների և խեցգետնակերպերի խնդիրների գիտական ուսումնասիրություններ:



**ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՅԼ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԻ ԿԵՐՆՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ և ԿԱՊԸ «ՋՐԻ և ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ**

«Ջրի և առողջության մասին» արձանագրության և ԿՉՆ-ների մեծամասնության հետ զոյություն ունի սերտ կապ: Արձանագրությունը հստակորեն կենտրոնանում է անվտանգ և կայուն խմելու ջրամատակարարման և ջրահեռացման ապահովման (թիրախներ 6.1 և 6.2), ինչպես նաև մարդկանց և էկոհամակարգերի համար առողջ միջավայրի ստեղծման վրա (թիրախ 6.6): Արձանագրությունն ուղղակիորեն առնչվում է ջրամատակարարման և ջրահեռացման վերաբերյալ ԿՉՆ-ի բոլոր տեսանկյուններին, ներառյալ ջրի ամբողջ ցիկլին՝ աղբյուրից մինչև օգտագործում (թիրախներ 6.4 և 6.5) և կեղտաջրերի վերաօգտագործմանը (թիրախ 6.3):


2015թ.-ի սեպտեմբերին ՀՀ կառավարությունը ստորագրեց «Օրակարգ 2030»-ը և դրա կայուն զարգացման 17 նպատակները: 2016թ.-ի մայիսին կառավարությունը նախաձեռնեց ՀՉՆ-ների ամփոփ գեկույցը և պաշտոնապես սկսեց ԿՉՆ-ների ազգայնացման գործընթացը՝ ստեղծելով նաև վերջինիս իրականացման համակարգը:

Հայաստանը 2015 թվականից ի վեր ստեղծել է ԿՉՆ-ների իրականացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքներ, որոնք ներառում են Հայաստանի վարչապետին կից Կայուն զարգացման ազգային խորհուրդը, ԿՉՆ-ների ազգայնացման միջգերատեսչական աշխատանքային խումբը և ԿՉՆ նորարարության ազգային լաբորատորիան: ԿՉՆ նորարարության ազգային լաբորատորիան նորարարական հարթակ է, որտեղ կառավարությունը և ՄԱԿ-ը միավորվում են՝ երկրում ԿՉՆ-ների իրականացմանն աջակցելու համար: ՀՀ վիճակագրական կոմիտեն<sup>3</sup> մշակել է գլոբալ մեթատվյալներ բոլոր ցուցանիշների վերաբերյալ, որոնք օգնում են գնահատել ԿՉՆ-ներին վերաբերող ընթացիկ վիճակը:

2016թ.-ի մայիսին կառավարությունը սկսեց ԿՉՆ-ների ազգայնացման գործընթացը:

2017թ.-ի հունիսին կառավարությունը պատրաստեց իր միջնաժամկետ զարգացման ծրագիրը, որը սահմանեց ԿՉՆ-ների հետ արդյունավետ փոխգործակցությունը: Ավելին, Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոնին հանձնարարվեց վերանայել և թարմացնել Հայաստանի զարգացման ռազմավարությունը՝ այն վերափոխելով մինչև 2030 թվականը երկարաժամկետ ռազմավարական զարգացման համակարգի՝ ներառելով ի հայտ եկող առաջնահերթություններն ու կարիքները, բազմակողմանի և նորարարական մոտեցումները՝ և՛ որպես տեսլական, և՛ որպես մեթոդաբանական գործիք: Հայաստանի 2014-2025թթ. զարգացման ռազմավարությունը սահմանում է բազմաթիվ տնտեսական և սոցիալական ոլորտներում ռազմավարական նպատակները, թիրախները և ցուցանիշները:

Ստորև գծապատկերում ներկայացվում է ԿՉՆ թիրախների առաջնահերթության մակարդակը: ԿՉՆ 6 –ը Հայաստանի համար հանդիսանում է գերակա ոլորտ:



*ԿՉՆ թիրախների առաջնահերթության մակարդակը  
Աղբյուրը՝ Հայաստանում ինտեգրված քաղաքականության արագ գնահատում*

3. ՀՀ կառավարության 22.05.2018թ. «Նախարարության ենթակա մարմինների ենթակայությունը սահմանելու մասին» N580-Ա որոշմամբ փոխվել է բոլոր գերատեսչությունների կառուցվածքը: ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը վերանվանվել է ՀՀ վիճակագրական կոմիտեի:

2018թ.-ի հուլիսին ՀՀ կառավարությունը ներկայացրեց առաջին ազգային կամավոր զեկույցը (ԱԱԿ)<sup>4</sup> ՄԱԿ-ի բարձր մակարդակի քաղաքական ֆորումում (ԲՄԶՖ):

ԱԱԿ-ում բարձրացվել են մի շարք խնդիրներ, մասնավորապես, գյուղական բնակավայրերում ջրահեռացման ծառայությունների մատչելիության ցածր մակարդակը. քաղաքային և գյուղական բնակչության միջև անվտանգ կառավարվող ջրահեռացման ծառայությունների անհավասար մատչելիությունը, ջրօգտագործման անարդյունավետությունը և դրա հետևանքով ջրի կորուստը, տվյալների բացակայությունը, հատկապես՝ այն համայնքներում, որտեղ ջրամատակարարումն ու ջրահեռացումն ապահովում են տեղական ինքնակառավարման մարմինները և այլն:

**Հայաստանը 2015թ.-ի դեկտեմբերին բանակցություններ սկսեց Եվրամիության հետ նոր Համապարփակ և ընդլայնված գործընկերության մասին համաձայնագրի շուրջ:**

2017թ.-ի նոյեմբերի 24-ին կայացավ Արևելյան գործընկերության գագաթաժողովը, որի շրջանակում ստորագրվեց Հայաստան-Եվրամիություն «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր»-ը, որն, ի թիվս այլոց, ներառում է պարտավորություններ Հայաստանի համար ջրի որակի և ռեսուրսների կառավարման ոլորտում իր օրենսդրության՝ հետևյալ հինգ դիրեկտիվների՝ Ջրի շրջանակային դիրեկտիվ, Հեղեղումների դիրեկտիվ, Քաղաքային կեղտաջրերի մաքրման դիրեկտիվ, Խմելու ջրի դիրեկտիվ և Նիտրատների դիրեկտիվ, պահանջների մոտարկմանն ուղղված միջոցառումների մասով:

<b>ԵՄ դիրեկտիվները</b>	<b>Հայաստանի Հանրապետության պարտավորությունները</b>
Ջրի շրջանակային դիրեկտիվ	<ul style="list-style-type: none"> <li>• Ազգային օրենսդրության ընդունում</li> <li>• Գետավազանային տարածքների բնութագրիչների վերլուծություն</li> <li>• Ջրի որակի մշտադիտարկման ծրագրերի հիմնում</li> <li>• Գետավազանային կառավարման պլանների մշակում, խորհրդակցություններ հանրության հետ և պլանների հրատարակում</li> </ul>
Հեղեղումների դիրեկտիվ	<ul style="list-style-type: none"> <li>• Ազգային օրենսդրության ընդունում</li> <li>• Հեղեղումների ռիսկի նախնական գնահատման ձևակերպում</li> <li>• Հեղեղումների վտանգի քարտեզների և հեղեղումների ռիսկի քարտեզների պատրաստում</li> <li>• Հեղեղումների ռիսկի կառավարման պլանների ստեղծում</li> </ul>
Քաղաքային կեղտաջրերի մաքրման դիրեկտիվ	<ul style="list-style-type: none"> <li>• Քաղաքային կեղտաջրերի հավաքման և մաքրման կարգավիճակի գնահատում</li> <li>• Չգայուն տարածքների և ագլոմերացիաների բացահայտում</li> <li>• Քաղաքային կեղտաջրերի մաքրման պահանջների կատարման տեխնիկական և ներդրումային ծրագրի նախապատրաստում</li> </ul>

4. Ազգային կամավոր զեկույցը մատչելի է հետևյալ կայքում՝ [https://sustainabledevelopment.un.org/content/documents/19586Armenia\\_VNR\\_2018.pdf](https://sustainabledevelopment.un.org/content/documents/19586Armenia_VNR_2018.pdf)

<p>Գյուղատնտեսական աղբյուրներից Նիտրատների պատճառած աղտոտման դեմ ջրերի պաշտպանության մասին դիրեկտիվ</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Աղտոտված ջրերի կամ ռիսկի տակ գտնվող ջրերի հատկորոշում և նիտրատով աղտոտման տեսակետից խոցելի գոտիների նշում</li> <li>• Նիտրատով աղտոտման տեսակետից խոցելի գոտիների համար լավագույն գյուղատնտեսական փորձի կողերի և գործողությունների ծրագրերում իրականացվելիք միջոցառումների սահմանում</li> <li>• Մշտադիտարկման ծրագրերի ստեղծում</li> </ul>
<p>Մարդու սպառման համար նախատեսված ջրի որակի մասին դիրեկտիվ</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Խմելու ջրի ստանդարտների հաստատում</li> <li>• Մշտադիտարկման համակարգի ստեղծում</li> <li>• Սպառողների համար տեղեկատվության տրամադրման մեխանիզմի ստեղծում</li> <li>• Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի իրականացման ճանապարհային քարտեզի մշակում</li> </ul>

Ներկայումս Հայաստանն Արևելյան գործընկերության երկրների համար ԵՄՋՆ+ ծրագրի թիրախային երկրներից մեկն է, որը նպատակ ունի աջակցել Հայաստանին ջրային ոլորտի բարեփոխումներում: Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կնքմամբ, Հայաստանը համաձայնեց ներդաշնակեցնել ազգային օրենսդրությունը ԵՄ օրենսդրության հետ: Ներդաշնակեցման առաջին քայլն ազգային ջրային օրենսդրության վերլուծությունն է՝ ԵՄ հինգ դիրեկտիվների առումով: Այս գործողությանը ԵՄՋՆ+ ծրագրի շրջանակում մասամբ աջակցում է ՄԱԿ-ի ԵՏՀ-ն՝ ազգային օրենսդրության ներդաշնակեցման համար ճանապարհային քարտեզի մշակման և ազգային օրենսդրությունում, օրինակ՝ ջրային օրենսգրքում փոփոխություններ առաջարկելու միջոցով:

## ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԶԱՍՆԵԼՈՒ ԶԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն փաստաթուղթը ներկայացնում է ԵՄՁՆ+ ծրագրի հիմնական արդյունքներից մեկը, որն առնչվում է «Զրի և առողջության մասին» արձանագրության շրջանակում ընտրված 9 թիրախային ոլորտում նպատակային ցուցանիշների և նպատակային ժամկետների վերանայմանը: Վերանայված 28 ազգային նպատակային ցուցանիշները և նպատակային ժամկետները ներկայացվել և քննարկվել են 2019թ.–ի փետրվարի 19-ին կայացած Ազգային շահագրգիռ կողմերի խորհրդատվական հանդիպման ժամանակ: Հանդիպման մասնակիցները հանդես են եկել նախնական նպատակային ցուցանիշների և նպատակային ժամկետների վերջնական տարբերակի պաշտոնապես ընդունման խնդրանքով: Ներկայացված նպատակային ցուցանիշները և նպատակային ժամկետները դեռ չեն հաստատվել:

Ներկա տեխնիկական փաստաթուղթն ինը թիրախային ոլորտից յուրաքանչյուրի համար տրամադրում է հետևյալ տեղեկատվությունը՝

- հիմնավորում,
- ներկա իրավիճակը և խնդիրները,
- նպատակային ցուցանիշները և նպատակային ժամկետները,
- նպատակային ցուցանիշներին և նպատակային ժամկետներին հասնելու համար առաջարկվող միջոցառումները:

«Ներկա իրավիճակը և խնդիրները» բաժինները հիմնված են օրենսդրության, ինստիտուցիոնալ կառույցների, ոլորտային նախագծերի ու ծրագրերի և ներկա իրավիճակի ելակետային ուսումնասիրության վրա:

Յուրաքանչյուր թիրախային ոլորտի նկարագրությունն ավարտվում է նպատակային ցուցանիշների և նպատակային ժամկետների և դրանց հասնելու համար առաջարկվող միջոցառումների բաժիններով:

## Հոդված 6, 2 (ա)

### Մատակարարվող խմելու ջրի որակը

Արձանագրության 6-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետով պահանջվում է սահմանել մատակարարվող խմելու ջրի վերաբերյալ թիրախային ցուցանիշներ և նպատակային ժամկետներ՝ հաշվի առնելով խմելու ջրի որակի վերաբերյալ ԱՀԿ-ի ուղեցույցը:

#### ՆԵՐԿԱՅԻՍ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Խմելու ջրի որակի հսկողությունն իրականացվում է սանիտարական կանոններով և նորմերով սահմանված կարգով, մասնավորապես.

Խմելու ջրի որակի նկատմամբ պետք է իրականացվի արտադրական հսկողություն և պետական սանիտարահամաճարակային վերահսկողություն:

Խմելու ջրի որակի արտադրական հսկողությունն ապահովվում է ջրամատակարարման համակարգի շահագործումն իրականացնող կազմակերպության կողմից:

Ջրառնի տեղերում լաբորատոր հետազոտությունների համար խմելու ջրի նմուշների քանակը և պարբերականությունը սահմանվում է հետևյալ պահանջներին համապատասխան.

Աղյուսակ 1. Ջրառնի տեղերում լաբորատոր հետազոտությունների համար խմելու ջրի նմուշների քանակի և պարբերականության հաճախականության սահմանման պահանջները

Ցուցանիշների տեսակներ	Մեկ տարվա ընթացքում նմուշների քանակը, ոչ պակաս	
	Ստորգետնյա աղբյուրների համար	Մակերեսային աղբյուրների համար
Մանրէաբանական	4 (ըստ տարվա եղանակների)	12 (ամենամսյա)
Մակաբուժական	չեն կատարվում	-/-
Չգայորոշման	4 (ըստ տարվա եղանակների)	12 (ամենամսյա)
Ընդհանրացված ցուցանիշներ	-/-	-/-
Անօրգանական և օրգանական նյութեր	1	4 (ըստ տարվա եղանակների)
Ռադիոլոգիական	1	1

Աղյուսակ 2. Քիմիական ցուցանիշներ

Նյութ	Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա, մգ/լ	Հայտնաբերված շեղումներ, %, 2012թ.	Հայտնաբերված շեղումներ, %, 2015թ.
Ֆտորիդ	1.2-1.5	0	1346 նմուշ/0 (0%)
Նիտրատ	45	0.47	24610 նմուշ/0 (0%)
Նիտրիտ	3.0	0	27958 նմուշ/0 (0%)
Մկնդեղ	0.05	0	588 նմուշ/0 (0%)
Կապար	0.03	0	404 նմուշ/0 (0%)
Երկաթ	0.3	0.51	4935 նմուշ/4 (0.08%)
Մնացորդային քլոր - ազատ	0.3-0.5	22.9	34872 նմուշ/3912 (11.2%)
Քլորիդ	350	0.05	15616 նմուշ/3 (0.01%)
Սուլֆատ	500	0.12	2447 նմուշ/0 (0%)
Ընդհանուր կոշտություն	7.0	1.1	6335 նմուշ/69 (1.1%)
Ամոնիակ	3.0	2.04	25361 նմուշ/154 (0.6%)

Վերջին տարիներին հանրապետությունում, ընդհանուր առմամբ, զգալի դրական տեղաշարժեր են արձանագրվել խմելու ջրի հասանելիության, ջրամատակարարման շարունակականության և անվտանգության աստիճանի ավելացման առումով: Այդուհանդերձ, ջրամատակարարման տևողությունը որոշ տարածքներում ներկայումս շարունակում է մնալ ցածր մակարդակի վրա և բնութագրվում է տարածքային զգալի անհամաչափություններով: Լուրջ հիմնախնդիր է գյուղական բնակավայրերում ջրամատակարարվող ջրի որակի և անվտանգության ապահովումը:

Ջրային գործոնով պայմանավորված հիվանդությունների կանխարգելման, սահմանափակման և նվազեցման նպատակով անհրաժեշտ է շարունակել ջրային պաշարների և ջրային համակարգերի կառավարման, օգտագործման և պահպանության համապատասխան գործողությունների իրականացումը՝ բարձրացնելով խմելու ջրի օգտագործման հասանելիությունը բոլորի համար, հատկապես գյուղական վայրերում և երեխաների համար նախատեսված կազմակերպություններում՝ ապահովելով ջրային պաշարների կայուն օգտագործումը, մարդու առողջության և հիգիենայի համար ջրի պահանջվող որակի ապահովումը և ջրաէկոհամակարգերի պահպանումը:

**ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

№	Նպատակներ	Նպատակային ժամկետներ և ցուցանիշներ (մինչև նշված տարիների ավարտը)	Առաջարկվող պատասխանատու կազմակերպություններ
1.1	Խմելու ջրի որակի քիմիական ցուցանիշների համապատասխանությունն ազգային ստանդարտներին (F, NO <sub>2</sub> , NO <sub>3</sub> , As, Fe, Pb)	Առնվազն 99% սկսած 2020թ.-ից	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե  Ջրամատակարարման, ջրահեռացման ծառայություններ իրականացնող կազմակերպություն (ներ)
1.2	Խմելու ջրի որակի միկրոբիոլոգիական ցուցանիշների՝ ազգային ստանդարտներին անհամապատասխանության մակարդակը	Մինչև 2020թ.-ը ոչ ավել քան մինչև 14%  Մինչև 2030թ.-ը ոչ ավել քան մինչև 10%	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե  Ջրամատակարարման, ջրահեռացման ծառայություններ իրականացնող ընկերություն (ներ)
1.3	«Ջրի անվտանգության ծրագրերի» մշակում և իրականացում	1 համայնքում մինչև 2030թ.-ը	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե  Ջրամատակարարման, ջրահեռացման ծառայություններ իրականացնող ընկերություն (ներ)

**ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**

№	Միջոցառումներ և գործողություններ	Ժամկետները	Պատասխանատու կազմակերպությունը
1	«Ջրի անվտանգության ծրագրի» մեթոդաբանության մշակում և համապատասխան իրավական դաշտի ստեղծում՝ ԱՀԿ-ի մոտեցումների հիման վրա	Մինչև 2025թ.-ը	ՀՀ առողջապահության նախարարություն

2	<p>Մարդու սպառման համար նախատեսված ջրի որակի մասին հրահանգի պահանջների իրականացում՝ իսմելու ջրի որակի ազգային նորմերի համապատասխանեցում «Մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի որակի մասին» 1998թ.–ի նոյեմբերի 3–ին ընդունված թիվ 98/83/ԵՄ հրահանգի և ԱՀԿ–ի «Իսմելու ջրի որակի վերաբերյալ ուղեցույց»–ի պահանջներին</p>	Մինչև 2023թ.–ը*	ՀՀ առողջապահության նախարարություն
3	<p>Իսմելու ջրի որակի մշտադիտարկման համակարգի համապատասխանեցում «Մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի որակի մասին» 1998թ.–ի նոյեմբերի 3–ին ընդունված թիվ 98/83/ԵՄ հրահանգի պահանջներին</p>	Մինչև 2023թ.–ը*	ՀՀ առողջապահության նախարարություն

\* 2017թ.–ի նոյեմբերի 24–ին ՀՀ–ի և ԵՄ–ի միջև ստորագրված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի վավերացումից հետո 5 տարվա ընթացքում



## Հոդված 6, 2 (բ)

### Ջրի հետ կապված բնկումների և հիվանդությունների կրճատում

Արձանագրության 6-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետով պահանջվում է սահմանել թիրախային ցուցանիշներ և նպատակային ժամկետներ՝ ջրի հետ կապված բնկումների և հիվանդությունների կրճատման համար:

#### ՆԵՐԿԱՅԻՍ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 46-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 10-ի N 1285-Ն որոշմամբ հաստատվել է պատվաստումների ազգային նոր օրացույցը, որի համաձայն 2012 թվականի նոյեմբերից ներդրվել է ռոտավիրուսային վարակի դեմ պատվաստումը, որով ենթակա երեխաների օրացուցային ժամկետներում ընդգրկումը 2012թ.-ի դեկտեմբերի 20-ի դրությամբ կազմել է 90 տոկոս: Պատվաստումը շարունակվում է իրականացվել նաև «2016-2020թթ. իմունականխարգելման ազգային ծրագրին, իմունականխարգելման ազգային ծրագրի առաջնահերթ միջոցառումների ցանկին, պատվաստումների ազգային օրացույցին, իմունականխարգելման ազգային ծրագրի ակնկալվող արդյունքներին և պատվաստման կամ կանխարգելման միջազգային վկայականի ձևին հավանություն տալու մասին» 17 մարտի 2016 թվականի N 10 արձանագրային որոշմամբ, և ենթակա երեխաների օրացուցային ժամկետներում ընդգրկումը 2017թ-ի դրությամբ կազմել է մոտ 94 տոկոս:

Հայաստանում ջրի միջոցով փոխանցվող հիվանդությունների համաճարակաբանական հսկողության համակարգը բարելավելու և այդ հիվանդությունների կանխարգելմանն ու նվազմանը նպաստելու նպատակով՝ ս/թ հունիսի 4-6-ը ԱՀԿ-ի աջակցությամբ Երևանում տեղի ունեցավ ջրի միջոցով փոխանցվող հիվանդությունների համաճարակաբանական հսկողության հզորացման թեմայով ազգային ուսումնական աշխատաժողով: Աշխատաժողովին մասնակցում էր «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» (ՀՎԿԿԿ) ՊՈԱԿ-ի ավելի քան 30 մասնագետ:

Աշխատաժողովի քննարկումների արդյունքում նշվեց հետևյալը.

- Հիվանդությունների համաճարակաբանական դիտարկման և բնկումների արձագանքման իրավական հիմքերը լավ մշակված և ներդրված են Հայաստանում:
- Համաճարակաբանները և հանրային առողջության մասնագետներն ունեն համաճարակաբանական դիտարկման և բնկումների արձագանքման գիտելիքների լավ մակարդակ:
- Առկա են արագ արձագանքման թիմեր, ապահովված է միջոլորտային համագործակցություն և ազգային և տարածքային մակարդակներում, ինչպես նաև առողջապահության նախարարության, ՀՎԿԿԿ-ի և տարածքային առողջապահական վարչությունների միջև:
- Առավել տարածված աղիքային վարակը Հայաստանում շիգելոզն է, հեպատիտ Ա-ի բեռը զգալիորեն նվազել է (վերջին 10 տարում ընդամենը 1 բնկում 19 դեպքով): Հարկ է նշել, որ աղիքային վարակների դեպքերի 50%-ի էթիոլոգիան մնում է անհայտ, ինչը հուշում է, որ համակարգը հետագա զարգացման և հզորացման կարիք ունի:
- Հարուցիչների լաբորատոր հայտնաբերման ժամանակի երկարատևությունը բնկումների ընթացքում կարող է խնդիր առաջացնել, ուստի կարևորվում է արագ թեստերի օգտագործումը:
- Հնացած ջրամատակարարման համակարգը, հատկապես գյուղական վայրերում, հաճախակի վթարները, մասնագիտական սպասարկման և լաբորատոր հսկողության բացակայությունն այդ վայրերի բնակիչների առողջության համար ռիսկ է առաջացնում:

«Ջրի և առողջության մասին» արձանագրության ներքո յուրաքանչյուր երկիր ներկայացնում է հաշվետվություն թիրախային ոլորտներում իրավիճակի և իրականացրած աշխատանքների վերաբերյալ: Ստորև աղյուսակում ներկայացված է երկրի հաշվետվությունում ներառված ջրային բնկումների քանակը:

Աղյուսակ 3. Ջրային ծագման բռնկումների քանակը

Հիվանդությունը	Դեպքերի թիվը			Բռնկումների քանակը		
	Բազային	Նախորդ հաշվետվական փուլում արձանագրված քանակը	Ընթացիկ քանակը	Բազային	Նախորդ հաշվետվական փուլում արձանագրված քանակը	Ընթացիկ քանակը
Խոլերա	0 (2010թ.), 0 (2011թ.), 0 (2012թ.)	0 (2013թ. հունվար- փետրվար)	0 (2016թ. հունվար- փետրվար)	0 (2010թ.), 0 (2011թ.), 0 (2012թ.)	0 (2013թ. հունվար- փետրվար)	0 (2016թ. հունվար- փետրվար)
Բակտերիալ դիզենտերիա (շիգելոզ)	728 (24.2) (2016թ.) 682 (22.8) (2017թ.) 1102 (33.1) (2018թ.)	459 (15.2) (2013թ.) 688 (22.8) (2014թ.) 1181 (62.4) (2015թ.)	83 (2.8) (2019թ. հունվար- մարտ)	1 բռնկում 107 դեպքով (2016թ.) 1 բռնկում 20 դեպքով (2016թ.) 1 բռնկում 35 դեպքով (2017թ.) 1 բռնկում 48 դեպքով (2017թ.) 1 բռնկում 37 դեպքով (2017թ.) 1 բռնկում 8 դեպքով (2017թ.) 1 բռնկում 14 դեպքով (2018թ.) 1 բռնկում 29 դեպքով (2018թ.) 1 բռնկում 37 դեպքով (2018թ.) 1 բռնկում 33 դեպքով (2018թ.)	1 բռնկում 34 դեպքով (2013թ.) 1 բռնկում 18 դեպքով (2014թ.) 1 բռնկում 66 դեպքով (2014թ.) 1 բռնկում 109 դեպքով (2014թ.) 1 բռնկում 146 դեպքով (2015թ.) 1 բռնկում 48 դեպքով (2015թ.)	0 (2019թ. հունվար- մարտ)
Էստերոհեմորագիկ աղիքային ցուպիկ	5 (0.2) (2016թ.) 18 (0.6) (2017թ.) 44 (1.5) (2018թ.)	15 (0.5) (2013թ.) 9 (0.3) (2014թ.) 35 (0.5) (2015թ.)	4 (0.1) (2019թ. հունվար- մարտ)	0 (2016թ.) 0 (2017թ.) 0 (2018թ.)	0 (2013թ.) 0 (2014թ.) 0 (2015թ.)	0 (2019թ. հունվար- մարտ)

Վիրուսային հեպատիտ Ա	24 (0.8) (2016թ.) 34 (1.1) (2017թ.) 24 (0.8) (2018թ.)	71 (4.4) (2013թ.) 73 (2.3) (2014թ.) 88 (2.9) (2015թ.)	1 (0.03)  (2019թ. հունվար- մարտ)	0 (2016թ.) 0 (2017թ.) 0 (2018)	0 (2013թ.) 0 (2014թ.) 0 (2015թ.)	0 (2019թ. հունվար- մարտ)
Որովայնային տիֆ	0 (2016թ.) 0 (2017թ.) 0 (2018թ.)	0 (2013թ.) 0 (2014թ.) 0 (2015թ.)	0 (0)  (2019թ. հունվար- մարտ)	0 (2016թ.) 0 (2017թ.) 0 (2018թ.)	0 (2013թ.) 0 (2014թ.) 0 (2015թ.)	0 (2019թ. հունվար- մարտ)

Հանրապետությունում ժամանակ առ ժամանակ առաջանում են բռնկումներ, որոնք չեն վերածվում համաճարակի: Հիմնականում արձանագրվում են աղիքային վարակների բռնկումներ՝ պայմանավորված ջրային (հիմնականում՝ ջրմուղ-կոյուղու ցանցում պարբերաբար առաջացող վթարներ) և սննդային գործոններով:

### ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

№	Նպատակներ	Նպատակային ժամկետներ և ցուցանիշներ (մինչև նշված տարիների ավարտը)	Առաջարկվող պատասխանատու կազմակերպություններ
2.1	Խոլերայի և որովայնային տիֆի և վիրուսային հեպատիտ Ա-ի՝ ջրի հետ կապված հիվանդացության դեպքերի, բռնկումների և համաճարակների բացակայության պահպանում	շարունակական	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե  Տեղական ինքնակառավարման մարմիններ
2.2	Ջրային գործոնով պայմանավորված հիվանդացության դեպքերի կամ բռնկումների առաջացման հնարավոր պատճառները բացառելու նպատակով ջրամատակարարման համակարգերի արդիականացմանն ու բարելավմանն ուղղված միջոցառումների շարունակական իրականացում և նոր ծրագրերի մշակում	շարունակական	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների և նախարարության ջրային կոմիտե  Տեղական ինքնակառավարման մարմիններ

**ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**

№	Միջոցառումներ և գործողություններ	Ժամկետները	Պատասխանատու կազմակերպությունը
1	Հզորացնել ջրային գործունակ պայմանավորված հիվանդացության դեպքերի կամ բռնկումների առաջացման հնարավոր պատճառ հանդիսացող իրավիճակների վերահսկման, այդ դեպքերին և բռնկումներին ու դրանց սպառնալիքին արձագանքման համակարգը՝ համաճարակաբանական հսկողություն և արձագանքում իրականացնելու կարողությունները և արդյունավետությունը՝ ներդնելով համաճարակաբանական հսկողության արդի մոտեցումներ	2020-2025թթ.	ՀՀ առողջապահության նախարարություն
2	Բռնկումների կառավարման ազգային ուղեցույցի վերանայում և ջրային ծագման բռնկումների վերահսկողության և համաճարակաբանական հետազոտության հետ կապված որոշակի ասպեկտների ներառում	2025թ.	ՀՀ առողջապահության նախարարություն
3	Պահպանել ռոտավիրուսային վարակի դեմ պատվաստումներին ենթակա երեխաների օրացուցային ժամկետներում ընդգրկման մակարդակը	2020-2025թթ.	ՀՀ առողջապահության նախարարություն

## Հոդված 6, 2 (գ)

### Խմելու ջրի հասանելիություն

Արձանագրության 3-րդ թիրախային ոլորտը պահանջում է սահմանել խմելու ջրի մատչելիության վերաբերյալ նպատակային ցուցանիշներ և նպատակային ժամկետներ:

#### ՆԵՐԿԱՅԻՍ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հանրապետությունում կա շուրջ 570 բնակավայր, որոնք չեն սպասարկվում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող մասնագիտացված ընկերությունների կողմից: Ջրամատակարարումն իրականացվում է լոկալ աղբյուրների միջոցով, ջրային համակարգերը շահագործվում են համայնքի կամ համայնքի բնակիչների միջոցով: Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսվում է շարունակել խմելու ջրի համակարգերի բարեփոխումները՝ նպատակ ունենալով բարձրացնել համակարգերի շահագործման հուսալիությունն ու արդյունավետությունը և բարելավել ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների որակն՝ ուշադրության կենտրոնում պահելով տարածքային անհամաչափությունների մեղմման խնդիրները: Ներդրումային քաղաքականության թիրախ կհանդիսանա մատուցվող ծառայությունների տևողության (նախնական գնահատականներով՝ ներդրումների առաջարկվող մակարդակը թույլ կտա ջրամատակարարման շարունակականության միջին հանրապետական ցուցանիշը տարեկան բարձրացնել 0.5 ժամով) ու որակի բարձրացումը և առկա տարածքային անհամաչափությունների մեղմումը: Այն նպատակաուղղված կլինի խմելու ջրի համակարգերի արդյունավետության բարձրացմանը՝ ուշադրության կենտրոնում պահելով, հատկապես, ջրի կորուստների նվազեցման խնդիրները: Ներդրումային քաղաքականության շրջանակում առանձին մոտեցում կցուցաբերվի շուրջ 570 բնակավայրի նկատմամբ, որտեղ ներկայումս ջրամատակարարումն ու ջրահեռացումը չի իրականացվում ջրամատակարարման ծառայությունների թույլտվություն ունեցող մասնագիտացված ընկերությունների կողմից: ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների ջրային կոմիտեի առաջարկությամբ՝ 2014թ. KfW բանկի ֆինանսավորմամբ Գերմանական «CES Consulting Engineers Salzgitter GmbH» ընկերության և «Զրտուք» ՍՊԸ ընկերությանը շնորհվել էր «Հայաստանի գյուղական համայնքների ջրմուղկոյուղու համակարգերի բարելավման և զարգացման տեխնիկատնտեսական ուսումնասիրություն» խորհրդատվական ծառայությունների պայմանագիրը, ինչի արդյունքում իրականացվել է ընկերության կողմից չսպասարկվող համայնքների վերաբերյալ նախնական հետազոտություն:

1. Շարունակել խմելու ջրի համակարգերի բարեփոխումները՝ նպատակ ունենալով բարձրացնել համակարգերի շահագործման հուսալիությունն ու արդյունավետությունը և ջրամատակարարման ու ջրահեռացման ծառայությունների որակը համապատասխանեցնել միջազգային չափորոշիչներին՝ ապահովելով կայուն, անվտանգ և հուսալի ծառայություններ:
  2. Անհրաժեշտ է ապահովել ջրամատակարարման բարելավման իրականացման աշխատանքների գնահատման շարունակականությունը՝ ջրամատակարար ընկերության սպասարկման տարածքից դուրս գտնվող բնակավայրերի համար:
  3. «Չսպասարկվող» տարածքներում պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) արդյունավետ ձևի/ձևերի ներդրում:
- Համաձայն վարձակալության պայմանագրի, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում են գտնվում ջրի մաքրման կայանները.

«Հայջրմուղկոյուղու» ՓԲԸ-ի սպասարկման տարածք

N	Ջրի մաքրման կայաններ	Տիպ	Հզորություն, մ³/օր	Տարեթիվ
1	Բերդ	Արագ գործողության ֆիլտր	5200	1975
2	Գոյովինո	Արագ գործողության ֆիլտր	5200	1962
3	Ֆրոլով	Արագ գործողության ֆիլտր	6900	1989

4	Բլրան	Արագ գործողության ֆիլտր	5200	1971
5	Գեղի	Արագ գործողության ֆիլտր	30 200	1980
6	Չանախչի	Արագ գործողության ֆիլտր	5200	1973
7	Վաչագան	Փակ ավազե ֆիլտր	1000	1974
8	Չվար	Արագ գործողության ֆիլտր	5600	1980
9	Ագարակ	Արագ գործողության ֆիլտր	3000	1972

Նախկին «Լոռի-ջրմուկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածք

N	Ջրի մաքրման կայաններ	Տիպ	Հզորություն, մ <sup>3</sup> /օր	Տարեթիվ
1	Խմելու ջրի մաքրման կայան	Հորիզոնական արագ գործողության	22 464	1969

Վերջին 6 տարվա ընթացքում վերանորոգվել է 342 դպրոց, ընդ որում գրեթե 50 տոկոսով նվազել է ջրամատակարարում չունեցող դպրոցների թիվը և 37-ով ավելացել է ջրահեռացում ունեցող դպրոցների թիվը (աղյուսակ 4):

Աղյուսակ 4. 2017-2018 ուս. տարում Հայաստանի հանրակրթական ուսումնական հաստատությունների քանակն՝ ըստ շենքերի վիճակի և հարմարությունների (ենթակառուցվածքների)

Մարզ	Դպրոցի պայմանները						
	շենքի վիճակը			ջրամատակարարումը		կոյուղացումը	
	բավարար է	կարիք ունի հիմնանորոգման	կարիք ունի ընթացիկ հիմնանորոգման	անկա է	բացակայում է	անկա է	բացակայում է
Երևան	180	63	15	258	0	257	1
Արագածոտն	79	22	21	107	15	97	25
Արարատ	72	28	12	110	2	105	7
Արմավիր	98	19	5	114	8	106	16
Գեղարքունիք	64	50	12	113	13	104	22
Լոռի	106	36	21	153	10	145	18
Կոտայք	68	23	12	102	1	101	2
Շիրակ	105	32	30	155	12	153	14
Սյունիք	69	33	16	110	8	104	14
Վայոց Ձոր	35	6	7	47	1	44	4
Տավուշ	52	18	12	80	2	68	14
<b>Ընդամենը</b>	<b>928</b>	<b>330</b>	<b>163</b>	<b>1349</b>	<b>72</b>	<b>1284</b>	<b>137</b>

Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսվում է շարունակել խմելու ջրի համակարգերի բարեփոխումները՝ նպատակ ունենալով բարձրացնել համակարգերի շահագործման հուսալիությունն ու արդյունավետությունը և բարելավել ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների որակը:

Խմելու ջրամատակարարման ոլորտում ներառված են պետության՝ ի դեմս ՀՀ կառավարության և խմելու ջրամատակարարման ծառայություն մատուցողի՝ ի դեմս վարձակալի և բաժանորդի հարաբերությունները: Օրենսդրական առումով պետություն-ջրամատակարար-բաժանորդ շրջանակն՝ ըստ իրավասությունների և պարտականությունների, ամրագրված է ՀՀ օրենսդրությամբ, մասնավորապես՝ Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի 2018-2030թթ. ռազմավարության և ֆինանսավորման ծրագրում:

**ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

№	Նպատակներ	Նպատակային ժամկետներ և ցուցանիշներ (մինչև կշված տարիների ավարտը)	Առաջարկվող պատասխանատու կազմակերպություններ
3.1	<p>Ապահովել անվտանգ և մատչելի խմելու ջրի հասանելիություն բոլորի համար</p> <p>(կենտրոնացված ջրամատակարարում)</p>	<p>ԿՉՆ 61.1ա նպատակին համապատասխան.</p> <p>Մինչև 2030 թ.–ը կենտրոնացված ջրամատակարարմամբ տնային տնտեսությունների տեսակարար կշիռը մինչև 99%</p>	<p>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե</p> <p>Տեղական ինքնակառավարման մարմիններ</p> <p>Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ իրականացնող ընկերություն (ներ)</p>
3.2	<p>Հանրակրթական հաստատություններում ջրամատակարարման բարելավում</p> <p>(հաստատությունները ներառում են մանկապարտեզները, ավագ դպրոցները և գիշերօթիկ դպրոցները)</p>	<p>30 հաստատությունում մինչև 2025թ.–ը</p> <p>Եվս 30 հաստատությունում մինչև 2030թ.–ը</p>	<p>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն</p> <p>Տեղական ինքնակառավարման մարմիններ</p> <p>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե</p>
3.3	<p>Առողջապահական հաստատություններում անվտանգ և որակյալ խմելու ջրի մատակարարման բարելավում</p>	<p>2 մարզային հիվանդանոցում մինչև 2025թ.–ը</p>	<p>ՀՀ առողջապահության նախարարություն</p>

**ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**

№	Միջոցառումներ և գործողություններ	Ժամկետները	Պատասխանատու կազմակերպությունը
1	Չսպասարկվող բնակավայրերի անվտանգ խմելու ջրի մատակարարման հասանելիության բարելավում՝ ջրամատակարարման համակարգերի կառուցմամբ և վերակառուցմամբ	Մինչև 2030թ.–ը	<p>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե</p> <p>Տեղական ինքնակառավարման մարմիններ</p> <p>Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ իրականացնող ընկերություն (ներ)</p>
2	Խմելու ջրի մաքրման 5 կայանի վերանորոգում	Մինչև 2031թ.–ը	<p>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե</p> <p>Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ իրականացնող ընկերություն (ներ)</p>
3	Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների ջրամատակարարման բարելավմանն ուղղված ծրագրերի մշակում և իրականացում, ջրամատակարարման մշտադիտարկման ու վերահսկողության բարելավում	<p>Վերանորոգում/ վերակառուցում</p> <p>30 հաստատությունում մինչև 2025թ.–ը,</p> <p>ևս 30 հաստատությունում մինչև 2030թ.–ը</p>	<p>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն</p> <p>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե</p> <p>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>ՀՀ առողջապահության նախարարություն</p> <p>Տեղական ինքնակառավարման մարմիններ</p>
4.	Առողջապահական հաստատություններում ջրամատակարարման բարելավման ծրագրերի մշակում և իրականացում և մշտադիտարկման և վերահսկողության բարելավում	Մարզային 2 հիվանդանոցում մինչև 2025թ.–ը	ՀՀ առողջապահության նախարարություն



### Հոդված 6, 2 (դ) Ջրահեռացման հասանելիություն

Արձանագրության 6-րդ հոդվածի 2-րդ կետի «դ» ենթակետով պահանջվում է սահմանել թիրախային ցուցանիշներ և նպատակային ժամկետներ այն տարածքի մակերեսի կամ բնակչության այն թվաքանակի կամ մասնաբաժնի համար, որը պետք է սպասարկվի ջրահեռացման կոլեկտիվ համակարգերով կամ որի ջրահեռացման կոլեկտիվ համակարգը պետք է բարելավվի այլ միջոցներով:

#### ՆԵՐԿԱՅԻՍ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

2017թ-ի հունվարի 1-ից ջրամատակարարման, ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցումն իրականացվում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից, որի ծառայությունների սակագները ուժի մեջ են մտել 2018 թվականի հունվարի 1-ից:

Հանրապետության քաղաքներն ու որոշ խոշոր բնակավայրեր ունեն ջրահեռացման համակարգեր: Ընդհանուր առմամբ, հանրապետությունում առկա է 3700 կմ ընդհանուր երկարությամբ ջրահեռացման ցանց, 350 կմ երկարությամբ մակերևութային ջրերի և անձրևաջրերի հեռացման համակարգ, 8 ջրահեռացման համակարգի պոմպակայան (տես՝ [www.veolia.am](http://www.veolia.am)):

Պետական սեփականություն հանդիսացող ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի և այլ գույքի միասնական վարձակալ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գործում է կեղտաջրերի մաքրման 6 կայան (ԿՄԿ)՝ Երևանի «ԱԷրացիա», Մարտունի, Վարդենիս, Գավառ, Դիլիջան և Ջերմուկ քաղաքների ԿՄԿ-ները՝ համապատասխանաբար 600.0 հազ.մ<sup>3</sup>/օր, 9.5 հազ.մ<sup>3</sup>/օր, 9.5 հազ.մ<sup>3</sup>/օր, 19.0 հազ.մ<sup>3</sup>/օր, 19.0 հազ.մ<sup>3</sup>/օր և 9.5 հազ.մ<sup>3</sup>/օր հզորությամբ: Երևանի «ԱԷրացիա» ԿՄԿ-ի փաստացի ելքը ներկայում կազմում է շուրջ 250.0 հազ.մ<sup>3</sup>/օր: «ԱԷրացիա» ԿՄԿ-ում, ինչպես նաև վերը նշված 5 ԿՄԿ-ում իրականացվում է միայն մեխանիկական մաքրում:

Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի 2018-2030թթ. ռազմավարության և ֆինանսավորման ծրագրում առաջնահերթ նպատակներից են նաև ՀՀ բնակավայրերում ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման խնդիրների լուծմանն ուղղված աշխատանքները: Միաժամանակ, «Ջրի և առողջության մասին» արձանագրության իրավասության սահմաններում գտնվող ջրերի մեջ չմաքրված կեղտաջրերի արտահոսքի դեպքերը կրճատելու նպատակով կարևոր նշանակություն ունի ջրահեռացման ոլորտի հիմնախնդիրների լուծումը:

Ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման հիմնախնդիրների լուծմանն ուղղված գործողությունների իրականացումը կապահովի ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման համակարգերի արդիականացումը, ինչպես նաև մի շարք բնապահպանական խնդիրների լուծումը: Խմելու ջրի մատակարարման ապահովության և անվտանգության տեսանկյունից առաջնային խնդիրներից է նաև խմելու ջրի աղբյուրներին (ռեսուրսներին) մոտ գտնվող բնակավայրերի ջրահեռացումն ու կեղտաջրերի մաքրումը:

2014 թվականին Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպության (ՏՀԶԿ) կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքներով՝ ՀՀ բոլոր բնակավայրերի ջրահեռացման համակարգերի բարելավման համար պահանջվում է 2.5 մլրդ եվրո ներդրում:

**ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

№	Նպատակներ	Նպատակային ժամկետներ և ցուցանիշներ (մինչև նշված տարվա վերջը)	Առաջարկվող պատասխանատու կազմակերպություններ
4.1	Սանիտարահիգիենիկ պայմանների բարելավում բոլորի համար	<p>Մինչև 2030թ.–ը</p> <p>ԿՉՆ 6.2 նպատակին համապատասխան</p> <p>6.2.1.ա Անվտանգ կառավարվող սանիտարական հարմարություններից օգտվող բնակչության համամասնությունը</p> <p>6.2.1.բ Օճառով և ջրով ձեռքերը լվանալու հարմարությունից օգտվող բնակչության համամասնությունը</p>	<p>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե</p> <p>ՀՀ վիճակագրական կոմիտե</p> <p>Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ իրականացնող ընկերություն (ներ)</p> <p>Տեղական ինքնակառավարման մարմիններ</p>
4.2	Բարելավել ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման օրենսդրությունը՝ հաշվի առնելով միջազգային պահանջները	Եվրամիության հրահանգների հետ մոտարկում մինչև 2023թ.–ը	<p>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե</p> <p>ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն</p> <p>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>Տեղական ինքնակառավարման մարմիններ</p>
4.3	Հանրակրթական ու նախադպրոցական հաստատություններում սանիտարահիգիենիկ պայմանների բարելավում	<p>30 հաստատությունում մինչև 2025թ.–ը</p> <p>Եվս 30 հաստատությունում մինչև 2030թ.–ը</p>	<p>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն</p> <p>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե</p> <p>Տեղական ինքնակառավարման մարմիններ</p>
4.4	Առողջապահական հիմնարկներում համարժեք սանիտարահիգիենիկ պայմանների ապահովման բարելավում	Մարզային 2 հիվանդանոցում մինչև 2025թ.–ը	ՀՀ առողջապահության նախարարություն

**ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**

№	Միջոցառումներ և գործողություններ	Ժամկետները	Պատասխանատու կազմակերպությունը
1	Վերանայել սանիտարական և կեղտաջրերի մաքրման ազգային օրենսդրությունը և ներառել ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) համակարգերի ռիսկերի գնահատումը և կառավարումը	Եվրամիության հրահանգների հետ մոտարկում մինչև 2023թ.–ը	<p>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե</p> <p>ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն</p> <p>ՀՀ առողջապահության նախարարություն</p> <p>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>Տեղական ինքնակառավարման մարմիններ</p>
2	Երևանի «Աերացիա» կեղտաջրերի մաքրման կայանի վերակառուցում և արդիականացում	Երևանի «Աերացիա» ԿՄԿ 2-րդ փուլի իրականացում՝ մինչև 2030թ.–ը	<p>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե</p> <p>Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ իրականացնող ընկերություն (ներ)</p>
3	Կեղտաջրերի մաքրման կայանների կառուցում և ջրահեռացման ցանցերի բարելավում	Կեղտաջրերի մաքրման կայանների վերանորոգում/ կառուցում Սևան, Արմավիր և Քաջարան քաղաքներում՝ մինչև 2030թ.–ը	<p>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե</p> <p>Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ իրականացնող ընկերություն (ներ)</p> <p>Տեղական ինքնակառավարման մարմիններ (ք. Քաջարան)</p>
4	Նոր ջրահեռացման համակարգերի կառուցում/վերակառուցում/ վերականգնում, ներառյալ կեղտաջրերի հեռացման և մաքրման այլընտրանքային համակարգերը	Մինչև 2030թ.–ը	<p>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե</p> <p>Ջրամատակարարման, ջրահեռացման ծառայություններ իրականացնող ընկերություն (ներ)</p> <p>Տեղական ինքնակառավարման մարմիններ</p>

5	<p>Հանրակրթական ու նախադպրոցական հաստատությունների սանիտարահիգիենիկ պայմանների բարելավմանն ուղղված ծրագրերի մշակում ու իրականացում</p>	<p>Վերանորոգում/ վերակառուցում</p> <p>30 հաստատությունում մինչև 2025թ.–ը,</p> <p>ևս 30 հաստատությունում մինչև 2030թ.–ը</p>	<p>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն</p> <p>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե</p> <p>ՀՀ առողջապահության նախարարություն</p> <p>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>Տեղական ինքնակառավարման մարմիններ</p>
6	<p>Առողջապահական հաստատություններում սանիտարահիգիենիկ պայմանների բարելավմանն ուղղված նպատակային ծրագրերի մշակում ու իրականացում</p>	<p>Մարզային 2 հիվանդանոցում մինչև 2025թ.–ը</p>	<p>ՀՀ առողջապահության նախարարություն</p>

## Հոդված 6, 2 (ը)

### Կեղտաջրերի մաքրման կայաններից արձանագրության իրավասության սահմաններում գտնվող ջրերի մեջ արտահոսած կեղտաջրերի որակը

«Ջրի և առողջության մասին» արձանագրության հոդված 6-ի 2-րդ կետի (ը) ենթակետի համաձայն, պահանջվում է սահմանել կեղտաջրերի մաքրման կայաններից արձանագրության իրավասության սահմաններում գտնվող ջրերի մեջ արտահոսած կեղտաջրերի որակի և դրա նկատմամբ թիրախային ցուցանիշներ և այդ ցուցանիշներին հասնելու ժամկետները:

#### ՆԵՐԿԱՅԻՍ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հանրապետությունում առկա 20 կեղտաջրերի մաքրման կայանից շահագործվում է միայն 7-ը՝ Երևանի «Աերացիա», Մարտունի, Վարդենիսի, Գավառի, Ջերմուկի, Դիլիջանի ԿՄԿ-ները և Փարաքարի կենսաբանական լճակը: Մնացած ԿՄԿ-ները չեն շահագործվում, իսկ գոյացած կեղտաջրերն առանց մաքրման հեռացվում են բաց ջրավազաններ: 6 կեղտաջրերի մաքրման կայաններն իրականացնում են միայն ամբողջական մեխանիկական մաքրում: Փարաքարի մաքրման կայանը, որը կառավարվում է համայնքի կողմից, իրականացնում է մեխանիկական և մասնակի կենսաբանական մաքրում:

ՀՀ-ում կենտրոնացված կոյուղու համակարգից օգտվում է ընդամենը 44 քաղաք և 21 գյուղ կամ բնակչության ընդհանուր թվի միայն 70%-ը: Առկա կոյուղու համակարգերը ծառայում են բազմաբնակարանային, հասարակական, կոմունալ շենքերի, արտադրական ձեռնարկությունների կենցաղային, հեղեղային և արտադրական հոսքերի հեռացման և մաքրման համար:

Արդյունաբերական հոսքերը հանրապետությունում հիմնականում նախնական մաքրում անցնելուց հետո կոյուղացանցով մղվում են քաղաքային մաքրման կայաններ՝ կոմունալ-կենցաղային կեղտաջրերի հոսքերի հետ միասին մաքրվելու նպատակով:

Քանի որ չմաքրված կեղտաջրերի արտահոսքը բաց ջրավազաններ օրենսդրորեն արգելվում է, բոլոր կոյուղացանցերի նախագծերով նախատեսվում էր համակարգի հոսքաջրերը մղել համապատասխան մաքրման կայաններ: Սակայն վերջին 30 տարվա ընթացքում պատշաճ շահագործման և ֆինանսների բացակայության և բազմաթիվ այլ պատճառներով նախատեսվող մաքրման կայանների մեծ մասը դարձան շահագործման համար ոչ պիտանի, իսկ մնացածը չկառուցվեցին կամ մնացին անավարտ:

Հանրապետությունում առկա մաքրման կայաններից մեծ մասի անմիջապես վիճակի և դրանցից, ինչպես նաև միայն մեխանիկական մաքրում իրականացնող գործող ԿՄԿ-ից բաց ջրավազաններ թափվող հոսքաջրերի անբավարար մոնիթորինգի, ինչպես նաև գյուղական բնակավայրերի մեծ մասի չկոյուղացման պատճառով, բաց ջրավազաններ թափվող կեղտաջրերի որակի մասին առկա տեղեկատվությունը լիարժեք չէ:

#### ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

№	Նպատակներ	Նպատակային ժամկետներ և ցուցանիշներ (մինչև նշված տարվա վերջը)	Առաջարկվող պատասխանատու կազմակերպություններ
11.1	Մաքրման կայաններից բաց ջրավազաններ արտահոսող ջրերի որակի նորմերի և հեռացման կարգի մշակում և սահմանում՝ հաշվի առնելով ԱՀԿ-ի «Ջրահեռացման և առողջության վերաբերյալ ուղեցույց»-ը	Մինչև 2023թ.-ը	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն  ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե

11.2	Չմաքրված/ոչ բավարար կեղտաջրերի արտահոսքի կրճատում Երևան քաղաքում	Մինչև 2030թ.-ը	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե  Ջրամատակարարման, ջրահեռացման ծառայություններ իրականացնող ընկերություն (ներ)
11.3	Չմաքրված/ոչ բավարար կեղտաջրերի արտահոսքի կրճատում ևս 4 քաղաքում	Կեղտաջրերի մաքրման կայանների վերանորոգում/կառուցում Սևան, Արմավիր և Քաջարան քաղաքներում՝ մինչև 2025թ.-ը  Առնվազն ևս մեկ մաքրման կայանի վերանորոգում/կառուցում մինչև 2030թ.-ը	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե  Ջրամատակարարման, ջրահեռացման ծառայություններ իրականացնող ընկերություն (ներ)  Քաջարան համայնք (Քաջարանի ԿՄԿ)

**ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՍԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**

№	Միջոցառումներ և գործողություններ	Ժամկետները	Պատասխանատու կազմակերպությունը
1	Բարելավել կեղտաջրերի մաքրման կայաններից բաց ջրավազաններ արտահոսած կեղտաջրերի որակին առնչվող օրենսդրական դաշտը	Մինչև 2025թ.-ը	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն  ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե
2	Իրականացնել ջրի որակի գնահատում՝ ըստ բաց ջրավազան արտանետվող կեղտաջրերի ԹՍԱ չափանիշների	Պիլոտային ծրագրի իրականացում Սևան և Հրազդան ջրավազանների համար մինչև 2020թ.-ը  ևս մեկ ավազանի համար (Հյուսիսային ջրավազան) մինչև 2022թ.-ը	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն

3	Չմաքրված/ոչ բավարար կեղտաջրերի արտահոսքի կրճատում Երևան քաղաքում	Երևանի «ԱԷրացիա» ԿՄԿ 2-րդ փուլի իրականացում՝ մինչև 2030թ.-ը	<p>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե</p> <p>Ջրամատակարարման, ջրահեռացման ծառայություններ իրականացնող ընկերություն (ներ)</p>
4	Արտանետվող կեղտաջրերի որակի մոնիտորինգի և գնահատման համակարգի բարելավում	Մինչև 2025թ.-ը	<p>ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն</p> <p>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե</p>

## Հոդված 6, 2 (Ժ), առաջին մաս

### Խմելու ջրի աղբյուր հանդիսացող ջրերի որակը

Արձանագրության 6-րդ հոդվածի 2-րդ կետի «Ժ» ենթակետի առաջին մասի համաձայն, պահանջվում է սահմանել թիրախային ցուցանիշներ և նպատակային ժամկետներ խմելու ջրի աղբյուր հանդիսացող ջրերի որակի նկատմամբ:

#### ՆԵՐԿԱՅԻՍ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Մակերեսային և ստորերկրյա աղբյուրների ջուրը մինչև ցանց հասնելը վարակազերծման, իսկ մակերեսային աղբյուրների ջուրը՝ նաև մաքրման կարիք ունի, սակայն մաքրման սարքավորումների մի մասն արդիական չէ, ուստի մաքրման կայանների վերազինման հարցը մնում է որպես հիմնախնդիր:

Որոշ դեպքերում չեն ապահովվում խմելու-տնտեսական նշանակության ջրմուղների և ջրամատակարարման աղբյուրների սանիտարական պահպանման խիստ ռեժիմի գոտիները, իսկ երկրորդ և երրորդ գոտիների հիդրոտեկրաբանական հաշվարկներ հանրապետությունում փաստացի չեն իրականացվում՝ համապատասխան մեթոդաբանության և ռեսուրսների բացակայության պատճառով: Բացառված չէ, որ երկրորդ և երրորդ գոտիներում ծավալվի այնպիսի տնտեսական գործունեություն, որը հետագայում պատճառ կհանդիսանա խմելու ջրի ինչպես մանրէային, այնպես էլ քիմիական աղտոտմանը:

Ըստ փորձագիտական գնահատականի, այս ոլորտը Հայաստանի Հանրապետության համար համարվում է գերակա:

1. Որոշ դեպքերում չեն ապահովվում ջրամատակարարման կառույցների սանիտարական պահպանման գոտիները:
2. Անբավարար է խմելու ջրի մաքրման և վարակազերծման սարքավորումների տեխնոլոգիական մակարդակը: Ոչ բոլոր տեղերում է ապահովված խմելու ջրի շարունակական վարակազերծումը: Բաց ջրամբարների ջրամատակարարման համակարգերի ջրի մաքրման կառույցներն արդիականացման կարիք ունեն:
3. Ջրամատակարարման աղբյուրների երկրորդ և երրորդ գոտիների սահմանագծերը ոչ բոլոր դեպքերում են որոշված, ինչը կարող է պատճառ դառնալ ջրի քիմիական և մանրէային աղտոտման:

#### ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

№	Նպատակներ	Նպատակային ժամկետներ և ցուցանիշներ (մինչև նշված տարվա վերջը)	Առաջարկվող պատասխանատու կազմակերպություններ
14.1	Ջրամատակարարման աղբյուրների և կառույցների սանիտարական պահպանման առաջին գոտիների սահմանների և ռեժիմի ապահովում	60% աղբյուրների գոտիների ապահովում՝ մինչև 2025թ.–ը  առնվազն 95% աղբյուրների գոտիների ապահովում՝ մինչև 2030թ.–ը	Ջրամատակարարման, ջրահեռացման ծառայություններ իրականացնող ընկերություն (ներ)  Տեղական ինքնակառավարման մարմիններ



14.2	Ջրամատակարարման աղբյուրների երկրորդ և երրորդ գոտիների սահմանագծերի որոշման մեթոդաբանության վերանայում և արդիականացում	Մինչև 2025թ.–ը	<p>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների և նախարարության ջրային կոմիտե</p> <p>Ջրամատակարարման, ջրահեռացման ծառայություններ իրականացնող ընկերություն (ներ)</p> <p>Տեղական ինքնակառավարման մարմիններ</p>
------	---	----------------	--

**ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**

№	Միջոցառումներ և գործողություններ	Ժամկետները	Պատասխանատու կազմակերպությունը
1	Խմելու ջրի աղբյուրներից ստացվող խմելու ջրի մաքրման կառույցների կառուցում և վերակառուցում	2 խմելու ջրի մաքրման կայանի կառուցում մինչև 2020թ.–ը	<p>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>Ջրամատակարարման, ջրահեռացման ծառայություններ իրականացնող ընկերություն (ներ)</p> <p>Տեղական ինքնակառավարման մարմիններ</p>
2	Ջրամատակարարման ծառայություններ մատուցող ընկերությունների սպասարկման տարածքից դուրս գտնվող համայնքների խմելու աղբյուր հանդիսացող ջրերի որակի ապահովում՝ ազգային ստանդարտներին համապատասխան	Շարունակական	Տեղական ինքնակառավարման մարմիններ

## Հոդված 6, 2 (լ)

### Հատկապես աղտոտված տարածքների հայտնաբերում և մաքրում

Արձանագրության 6-րդ հոդվածի 2-րդ կետի «լ» ենթակետի համաձայն, պահանջվում է սահմանել թիրախային ցուցանիշներ և նպատակային ժամկետներ արձանագրության իրավասության սահմաններում գտնվող ջրային ռեսուրսների և օբյեկտների վրա հնարավոր բացասական ազդեցությունն ունեցող և այդպիսով ջրի հետ կապված հիվանդությունների առաջացման վտանգի հնարավոր աղբյուր հանդիսացող հատկապես աղտոտված վայրերի հայտնաբերման և մաքրման նկատմամբ:

#### ՆԵՐԿԱՅԻՍ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության համար ներկայումս առաջնային են Սևանա լճի մակարդակի բարձրացման և դրա ջրհավաք ավազանի բնական պաշարների պահպանության և կառավարման հարցերը:

Սևանա լճի մակարդակի բարձրացման արդյունքում առաջացել են հիմնախնդիրներ՝ կապված ավիամերձ անտառապատ ջրածածկ տարածքների մաքրման աշխատանքների իրականացման հետ: Ջրի տակ մնացող օրգանական նյութերի մեծ զանգվածները վտանգում են լճի վիճակը՝ ջրի աղտոտման տեսակետից: Լուրջ խնդիրներ են առաջացնում նաև ջրի տակ մնացած բազմաթիվ շինությունները և ենթակառուցվածքները: Միաժամանակ ջրի բարձր որակն ապահովելու համար կարևոր է կտրուկ բարելավել վիճակը՝ կապված մեծ քանակի չմաքրված կեղտաջրերի լիճ թափվելու հետ: Ներկայումս լճի ավազանում առկա բոլոր մաքրման կայանները չեն գործում:

Սևանա լճի ձկնաշխարհն աչքի է ընկել ինքնատիպությամբ: Սակայն լճի մակարդակի իջեցումը, կենսապաշարների գերօգտագործումը և դրանց կանոնավոր մոնիթորինգի բացակայությունը նպաստել են լճի կենսաբազմազանության փոփոխմանը, ձկնապաշարների կտրուկ անկմանը՝ Էնդեմիկ ձկնատեսակների, հատկապես՝ Սևանի իշխանի ենթատեսակների անհետացմանը և սիգ ձկնատեսակի արդյունագործական ծավալների նվազեցմանը: Ձկնատեսակների թվաքանակի կրճատման հետևանքով լճային Էկոհամակարգում տեղի է ունենում օրգանական նյութերի ինտենսիվ կուտակում և ճահճացմանը հանգեցնող գործընթացների արագացում, ինչը ևս բացասաբար է անդրադառնում Սևանի ջրային Էկոհամակարգի վրա:

Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ն իրականացնում է մակերևութային և ստորերկրյա ջրերի որակի մոնիթորինգ:

2017 թվականին մակերևութային ջրերի մոնիթորինգն իրականացվել է հանրապետության 55 ջրային օբյեկտի, այդ թվում՝ 48 գետի, 6 ջրամբարի և Սևանա լճի, 131 դիտակետում: Մակերևութային ջրերի որակի գնահատումը կատարվում է ՀՀ կառավարության 2011թ.-ի հունվարի 27-ի N 75-Ն որոշման համաձայն, ըստ որի ջրի որակը դասակարգվում է հինգ դասի՝ գերազանց, լավ, միջակ, անբավարար և վատ:

2017 թվականի ընթացքում ստորերկրյա ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է 100 ջրաղբյուրում: 2017 թ.-ի ընթացքում վերցվել է ջրի 100 նմուշ, որոնցում որոշվել է ջրի որակի 40 ցուցանիշ: Ընդհանուր առմամբ, որոշվել է 4000 ցուցանիշ:

Մակերևութային և ստորերկրյա ջրերի որակի գնահատականները հրապարակվում են ՇՄՍԿ ՊՈԱԿ-ի ([www.armmonitoring.am](http://www.armmonitoring.am)) և ՀՀ շրջակա միջավայրի նախարարության ([www.mnp.am](http://www.mnp.am)), ինչպես նաև վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքերում ([www.armstat.am](http://www.armstat.am)):

2017 թվականի ընթացքում մակերևութային ջրերի դիտակետերի 22%-ում ջրի որակը գնահատվել է վատ, 15%-ում՝ անբավարար, 37%-ում՝ միջակ, իսկ 26%-ում՝ լավ: Պետք է հաշվի առնել, որ այս գնահատականները տրվել են միայն ջրի որակի ֆիզիկաքիմիական պարամետրերի կիրառմամբ: 2016թ.-ի համեմատությամբ մակերևութային ջրային ռեսուրսների որակը վատացել է: 2016թ.-ին ջրի վատ որակ գնահատվել է դիտակետերի 15%-ում, անբավարար որակ՝ 11%-ում, միջակ որակ՝ 30 %-ում և լավ որակ՝ 44%-ում:

2017 թվականի ընթացքում մակերևութային ջրային ռեսուրսների որակի «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս) մակարդակներ են գրանցվել Դեբեդ, Տաշիր, Ախթալա, Շնող, Գետիկ, Ախուրյան, Կարկաչուն, Մեծամոր, Զասախ, Գեղարոտ, Զրազդան, Գետառ, Մարմարիկ, Մասրիկ, Վարդենիկ, Գավառագետ, Արփա, Կարճևան, Ողջի, Արծվանիկ (Նորաշենիկ), Գորիսագետ (Վարարակ) գետերի որոշակի հատվածներում և Երևանյան լճում:

Ընդհանուր առմամբ, գետերի աղտոտվածության պատճառը չմաքրված կոմունալ- կենցաղային կեղտաջրերի, հանքարդյունաբերության և գյուղատնտեսության կեղտաջրերի ազդեցությունն է:

**ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**

№	Նպատակ	Նպատակային ցուցանիշ	Առաջարկվող պատասխանատու կազմակերպություններ
1	Ռիսկային ջրային մարմինների հայտնաբերում/դասակարգում	Մինչև 2023թ.-ը	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
2	Աղտոտման կրճատմանն ուղղված միջոցառումների ծրագրի մշակում	Մինչև 2024թ.-ը	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
3	Իրականացնել գնահատում՝ ըստ բաց ջրավազան արտանետվող կեղտաջրերի ԹՍԱ չափանիշների	Փորձական ծրագրի իրականացում Սևան և Զրազդան ջրավազանների համար մինչև 2020թ.-ը և  ևս մեկ ավազանի համար (Հյուսիսային ջրավազան) մինչև 2022թ.-ը	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
4	Ջրերի մշտադիտարկման համակարգի կարողությունների հզորացում, այդ թվում նաև՝ հիդրոկենսաբանական	2025թ.	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն

**ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՍԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**

№	Միջոցառումներ	Նպատակային ցուցանիշ	Պատասխանատու
1	Բաց ջրավազան արտանետվող կեղտաջրերի թույլատրելի սահմանային արտահոսքի (ԹՍԱ) չափանիշների սահմանում՝ ըստ ջրային ռեսուրսների	Մինչև 2025թ.-ը՝  բաց ջրավազան արտանետվող կեղտաջրերի թույլատրելի սահմանային արտահոսքի (ԹՍԱ) չափանիշների սահմանման առկայություն	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն  ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
2	Նիտրատից խոցելի գոտիների որոշում և աղտոտված/կամ վտանգի տակ գտնվող ջրերի հատկորոշում/սահմանում համաձայն ԵՄ նիտրատների դիրեկտիվի պահանջների	Մինչև 2023թ.-ը	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
3	Սևանա լճի Էկոհամակարգի պահպանման համար ջրի որակի նորմերի սահմանում	Մինչև 2020թ.-ը	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն

## Հոդված 6, 2 (խ)

### Ջրային ռեսուրսների կառավարման, զարգացման, պահպանման և օգտագործման համակարգերի արդյունավետությունը

«Ջրի և առողջության մասին» արձանագրության հոդված 6-ի 2-րդ կետի «խ» ենթակետի համաձայն, պահանջվում է սահմանել ջրային ռեսուրսների կառավարման, զարգացման, պահպանման և օգտագործման համակարգերի արդյունավետության նպատակով օգտագործվող կեղտաջրերի որակի նկատմամբ թիրախային ցուցանիշներ և այդ ցուցանիշներին հասնելու ժամկետներ:

### ՆԵՐԿԱՅԻՍ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԶԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

#### Ջրային ռեսուրսների պետական կադաստր

Համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 21-ին ընդունված «ՀՀ ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-19-Ն օրենքի 19.2-րդ հոդվածի, ինչը կանոնակարգում է ջրային ռեսուրսների պետական կադաստրի վարման գործընթացը՝ ՀՀ կառավարության 2003 թվականի հուլիսի 23-ի «Ջրային պետական կադաստրում փաստաթղթերի գրանցման և տեղեկատվության տրամադրման կարգը հաստատելու մասին» N 1060-Ն որոշմամբ սահմանված ընթացակարգային նորմերը չէին համապատասխանում օրենսգրքի նոր պահանջներին:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից մշակվեց և ՀՀ կառավարության կողմից 2017 թվականի փետրվարի 2-ին ընդունվեց «Ջրային ռեսուրսների պետական կադաստրի վարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության 2003 թվականի հուլիսի 23-ի N 1060-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 68-Ն որոշումը, որով հստակեցվեց ջրային ոլորտի շահագրգիռ գերատեսչությունների միջև տեղեկատվության փոխանակման գործընթացը և տեղեկատվության տրամադրման կարգը: Համաձայն որոշման պահանջների, մշակվել է ջրային ռեսուրսների պետական կադաստրի տեղեկատվական բազայի կատարելագործման և արդիականացման տեխնիկական առաջադրանքը, և ԱՄՆ ՄՉԳ-ի «Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն հանուն ռեսուրսների համալիր պահպանության» և ԵՄ Ջրային նախաձեռնությունն պլյուս ծրագրերի շրջանակում իրականացվում են ջրային ռեսուրսների պետական կադաստրի տեղեկատվական բազայի թարմացման աշխատանքները:

#### Ջրավազանային կառավարման պլաններ

Հանրապետության 6 ջրավազանային կառավարման պլանից ընդունվել է 3-ը՝ Արարատյանը, Հարավայինը և Ախուրյանը: Արարատյան ջրավազանային կառավարման պլանը մշակվել է «Հայիդրոէներգանախագիծ» ՓԲԸ-ի կողմից ՀՀ պետբյուջեի ֆինանսավորմամբ, 71 մլն դրամ, Հարավայինը՝ ԱՄՆ ՄՉԳ «Մաքուր էներգիա և ջուր» ծրագրի աջակցությամբ, իսկ Ախուրյանի ջրավազանային կառավարման պլանը՝ Եվրամիության «Միջազգային գետավազանների շրջակա միջավայրի պահպանություն» ծրագրի շրջանակում:

Եվրամիության Ջրային նախաձեռնությունն պլյուս ծրագրի շրջանակում 2018 թվականին մեկնարկել են Հրազդան և Սևան ջրավազանային կառավարման պլանի մշակման աշխատանքները՝ համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 26-ի N 45 արձանագրային որոշման:

### ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԸՆԹԱՑԻԿ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Չնայած Հայաստանում ջրային ոլորտի օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումների էական առաջընթացին, դեռևս շատ մարտահրավերներ կան, որոնց պետք է անդրադարձ կատարվի: Այդ նպատակով, վարչապետի 2017 թվականի հունիսի 20-ի N 600-Ա որոշման համաձայն, ստեղծվեց միջգերատեսչական աշխատանքային խումբ, որի շրջանակում մշակվեց «ՀՀ ջրի ազգային ծրագրի

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը: Ըստ նախագծի, ավելի հստակեցվել է օրենքի միջոցառումների փուլային ծրագիրը, ինչպես նաև, ջրային ոլորտի ներկա իրավիճակից ելնելով, ներառվել են ոլորտին վերաբերող նոր առանցքային հիմնախնդիրներ՝ համապատասխան փուլային միջոցառումներով:

Եվրամիության Ջրային նախաձեռնությունն այլուս ծրագրի շրջանակում մշակվել է 2017 թվականի նոյեմբերի 24-ին Հայաստանի և ԵՄ-ի միջև ստորագրված՝ ջրի որակի և ռեսուրսների կառավարման ոլորտում համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի իրականացման ճանապարհային քարտեզը, որի նպատակն, ի թիվս այլոց, ՀՀ ջրային օրենսդրության և ԵՄ օրենսդրության ներդաշնակեցումն է:

**ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

№	Նպատակներ	Նպատակային ժամկետներ և ցուցանիշներ (մինչև նշված տարվա վերջը)	Առաջարկվող պատասխանատու կազմակերպություններ
19.1	3 ջրավազանային կառավարման պլանների մշակում	Հրազդան և Սևան ջրավազանների համար՝ մինչև 2020թ.–ը  Հյուսիսային ջրավազանի համար՝ մինչև 2022թ.	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
19.2	Կենսաբանական մոնիթորինգի կարողությունների ստեղծում և հզորացում	Մինչև 2025թ.–ը	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
19.3	Ջրային ռեսուրսների՝ ըստ ջրային մարմինների դասակարգում	Մինչև 2023թ.–ը	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
19.4	Ջրերի որակի կառավարման ռազմավարության լրամշակում՝ համաձայն ԵՄ ՋՇԴ պահանջների	Մինչև 2023թ.–ը	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

№	Միջոցառումներ և գործողություններ	Ժամկետները	Պատասխանատու կազմակերպությունը
1	Ջրի որակի կառավարման ռազմավարության բարելավում՝ ԵՄ ՋՇԴ պահանջներին համապատասխան	Մինչև 2023թ.–ը	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
2	Ջրավազանային կառավարման խորհուրդների գործունեության և իրավասությունների օրենսդրական հիմքի ստեղծում	Մինչև 2025թ.–ը	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
3	Ջրավազանային տարածքային կառավարման բաժինների ինստիտուցիոնալ և տեխնիկական հզորացում	Մինչև 2025թ.–ը	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն  ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե
4	Ստորերկրյա ջրային ռեսուրսների հիդրոլոգիական գնահատում	Արարատյան դաշտավայրի համար՝ մինչև 2020թ.–ը  Ամբողջ երկրի համար՝ մինչև 2030թ.–ը	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն  ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե
5	Ուժեղացնել ջրավազանային կառավարման մարմինների կառավարման գործառույթները՝ զարգացնելով վերջիններիս կարողությունները: Ջրաէկոհամակարգերի բարելավման միջոցառումների պլանի մշակում	Մինչև 2030թ.–ը	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն

## Հոդված 6, 2 (ծ)

### Մատակարարվող խմելու ջրի և այլ ջրերի որակի վերաբերյալ տեղեկատվության հրապարակման հաճախականությունը

Երկրները պետք է սահմանեն մատակարարվող խմելու ջրի և սահմանված թիրախներին համապատասխան այլ ջրերի որակի վերաբերյալ տեղեկատվության հրապարակման հաճախականությունը՝ տեղեկատվության հավաքագրման, նպատակային ցուցանիշներին հասնելու առաջընթացի գնահատման և ժամկետների վերաբերյալ: Նման հրապարակումը պետք է տեղի ունենա յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ, ինչպես որոշվում է արձանագրության կողմերի խորհրդակցությամբ:

#### ՆԵՐԿԱՅԻՍ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի գործողությունը տարածվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների և դրանց պաշտոնատար անձանց վրա:

ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեն իր էլեկտրոնային կայքի վրա ներկայացնում է տեղեկատվություն՝ ոլորտում կատարված աշխատանքների, մասնավորապես՝ խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման և ոռոգման ջրի վերաբերյալ ([www.scws.am](http://www.scws.am)):

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն տեղադրում է իր կայքում տեղեկատվություն՝ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման մատուցված ծառայությունների, ջրի որակի, սպառողների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ: Թեպետ կազմակերպությունն իրականացնում է ջրի որակի ամենօրյա հետազոտություն, տեղադրում է իր կայքում սահմանափակ տեղեկատվություն հաշվետվությունների տեսքով ([www.veolia.am](http://www.veolia.am)):

Խմելու ջրի վերաբերյալ տեղեկատվությունը շուրջ 570 համայնքի մասին, որոնք չեն սպասարկվում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող ընկերության կողմից, հասանելի չէ:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ը ջրային ավազանի աղտոտվածության վերաբերյալ մանրամասն տվյալները ներկայացնում է ամսական և տարեկան կտրվածքով՝ իր էլեկտրոնային կայքի վրա ([www.armmonitoring.am](http://www.armmonitoring.am)): 2017 թվականին իրականացվել է հանրապետության 55 ջրային օբյեկտի, այդ թվում՝ 48 գետի, 6 ջրամբարի և Սևանա լճի ջրերի որակի մշտադիտարկում 131 դիտակետում: Մակերևութային ջրերի աղտոտվածության որոշման և գնահատման համար վերցված փորձանմուշներում որոշվում է մինչև 60 ցուցանիշ (ջրաքիմիական հիմնական բաղադրիչներ, ծանր մետաղներ, քլորօրգանական պեստիցիդներ և այլն): Նույն տեղեկատվությունը մշակված տարբերակով ներկայացնում է նաև շրջակա միջավայրի նախարարություն ([www.mnr.am](http://www.mnr.am)): Ջրային ավազանի աղտոտվածության վերաբերյալ տվյալները տարեկան կտրվածքով իր էլեկտրոնային կայքի վրա է ներկայացնում նաև ՀՀ վիճակագրական կոմիտեն ([www.armstat.am](http://www.armstat.am)):

Մարդկանց առողջության վերաբերյալ ցուցանիշները հասանելի են առողջապահության նախարարության ([www.moh.am](http://www.moh.am)) և առողջապահության տեղեկատվական վերլուծական կենտրոնի ([http://nih.am/am/subdivisions/health\\_analytical\\_center](http://nih.am/am/subdivisions/health_analytical_center)) ինտերնետային կայքերում: Տեղեկատվությունն առողջության վերաբերյալ տրամադրվում է նաև ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից՝ տարբեր հրապարակումների տեսքով և ինտերնետային կայքում ([www.armstat.am](http://www.armstat.am)):

Հասարակական և միջազգային կազմակերպությունները նույնպես իրենց կայքերում տեղադրում են տեղեկատվություն՝ իրականացված ծրագրերի վերաբերյալ: Օրինակ, Օրիոս կենտրոնների ցանցը շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրում է իր կայքի միջոցով ([www.aarhus.am](http://www.aarhus.am)):

«Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ն մասնակցել է մի շարք ծրագրերի իրականացմանը «Ջրի և առողջության մասին» արձանագրության ներքո: Այդ ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է կազմակերպության կայքում ([www.awhhe.am](http://www.awhhe.am)):

Հայաստանի Հանրապետությունում «Ջրի և առողջության մասին» արձանագրության ներքո իրականացվել են մի շարք ծրագրեր: Ծրագրերը համակարգվել են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կամ ջրային կոմիտեի կողմից՝ ՄԱԿ-ի ԵՏՀ-ի աջակցությամբ: Ծրագրերին աջակցել է ՀՀ առողջապահության նախարարությունը: Այդ ծրագրերն են.

- «Իրազեկության բարձրացում ՄԱԿ-ի ԵՏՀ-ի «Միջազգային լճերի և անդրսահմանային ջրահոսքերի պահպանության և օգտագործման մասին» կոնվենցիայի և «Ջրի և առողջության մասին» արձանագրության և դրանց խթանման ու իրագործման գործընթացում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների դերի ամրապնդման մասին», 2012թ.
- «Նպատակային ցուցանիշների սահմանման գործընթացը Հայաստանում՝ համաձայն «Ջրի և առողջության մասին» արձանագրության», 2012-2014թթ.
- «Ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ինքնազննահատում Հայաստանում», 2016թ.
- «Հայաստանում ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովման գործողությունների ծրագրի մշակում», 2017թ.
- ««Հայաստանում «Ջրի և առողջության մասին» արձանագրության համատեքստում սահմանված ազգային թիրախների վերանայում և «Ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովման գործողությունների ծրագրի»-ի իրականացում», 2018-2019թթ.:

Հայաստանի Հանրապետությունը ՄԱԿ-ի ԵՏՀ-ի 1992թ.-ի «Անդրսահմանային ջրային հոսքերի և միջազգային լճերի պաշտպանության և օգտագործման մասին կոնվենցիային» (Ջրային կոնվենցիա) կից ՄԱԿ-ի ԵՏՀ –ի և ԱՀԿ/Եվրոպա-ի «Ջրի և առողջության մասին» արձանագրությունը ստորագրել է 1999թ.-ի հունիսի 17-ին, Լոնդոնում, բայց դեռ չի վավերացրել այն: Արձանագրության կողմ երկրները յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ հանձնում են հաշվետվություն՝ արձանագրության քարտուղարությանը երկրի կողմից արձանագրության ներքո իրականացված աշխատանքների և առաջընթացի վերաբերյալ: Թեպետ Հայաստանը չի հանդիսանում արձանագրության կողմ, այնուամենայնիվ, ներկայացրել է երկրի հաշվետվությունը 2010, 2013, 2016 և 2019 թվականներին:

**ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

№	Նպատակներ	Նպատակային ժամկետներ և ցուցանիշներ (մինչև նշված տարվա վերջը)	Առաջարկվող պատասխանատու կազմակերպություններ
20.1	Խմելու ջրի որակի վերաբերյալ տարեկան հաշվետվության հրատարակում	Շարունակական	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե  Ջրամատակարարման, ջրահեռացման ծառայություններ իրականացնող ընկերություն (ներ)  ՀՀ առողջապահության նախարարություն



20.2	«Ջրի և առողջության մասին» արձանագրության համապատասխան ազգային զեկուլցի հրապարակում	3 տարին մեկ անգամ՝ սկսած 2019թ.-ից	<p>ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն</p> <p>ՀՀ առողջապահության նախարարություն</p> <p>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե</p>
20.3	ՋԴԿ –ում «Ջրի և առողջության մասին» արձանագրության ոլորտների վերաբերյալ տեղեկատվական տվյալներով համալրում	Մինչև 2021թ.–ը	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն

**ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**

№	Միջոցառումներ և գործողություններ	Ժամկետները	Պատասխանատու կազմակերպությունը
1	«Ջրի և առողջության մասին» արձանագրության ազգային հաշվետվության և խմելու ջրի որակի վերաբերյալ հաշվետվությունների հրապարակումների հասանելիության ապահովում հասարակայնության համար	շարունակական	<p>ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն</p> <p>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե</p> <p>ՀՀ առողջապահության նախարարություն</p>





